Ի ԳՐՈՑ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
Պ. Կ.. Հալլաճեանց.
Թ. 367. 25. Գ.չնն 3ր.

I
947

2000

[illegible]

225 нур

947

73-ChY

8120-57

ուհ.
947

# ԳԻՐՔ
# ԳՐԳՈՒԿՍ
# ՐՅՈՊՐՏՄԼ

Նախ մի գալստեանն Յի երկու: Երկրորդ մի չարչարանացն որկ րեաց առաջի պիղատոսի դատաւո րի, և քահանայապետիցն աննայի և կայիափայ: Ասացեալ երանելոյն յակոբայ տն եղբօրն:

Տպագրեցեալ ՚ի փառս ամենամե ծին այ:

Օգուտ վերծանողաց:

՚Ի Հայրապետութեն տն Աղեքսան դրի Ջուղայեցւոյ· Սրբազան Կաթու ղիկոսի ամ Հայոց· սրբոյ Աթոռոյն Էջմիածնի:

Եւ ՚ի յամի փրկչին· ռչժ ին:

Եւ հայոց [illegible] ին· ՚Ի Մայրաքա ղաքն Կոստանդնուպօլիս:

8120-57
3992
А. МЯСНИКЯН
1710


C
I
H
G
F
D
E

Աւտն գալըստեանն յէ ջէմ.

Եւ 'ի բեդանիա դէպ յԷմ. և ժողովուրդ բազում ընդ նմայ և նոր կենդանացեալ ղազար ընդ նմայ շրջէր. Եւ որք լսէին թէ քս անցանէ. ղազար կենդանացեալ շրջի ընդ նմայ անթիւ ժողովուրդ գային տեսանել զյս և զղազար։ Եւ եկալ 'ի տեղին որ բեթբրագե անուն դիւղին կայր յանդէպ։ Եւ առաքեաց երկուս աշակերտս և ասէ. գնացէք իբրև մտանիցէք 'ի գեւղն էշ մի տեսանիցէք կապեալ անդ և աւանակ մի ընդ նմայ. արձակեցէք և բերէք. և թէ ոք հարցանիցէ զձեզ՝ ասացէք թէ տն խարում պիտոյէ։ Եւ նոքա գնացին գտին որպէս ասաց յս. արձակեցին և բերին համդերձ 'ի վր նր արկին. և

նստաւ ք՟ս 'ի վր՟ նր՟. մինչ երթայր զա
քեոս նստէր 'ի մաքսաւորութն. իբրև
լուաւ՝ և տեսաւ՝ զբազմութի ժողովրդ
եանն հարցանէր թէ զինչ է այն։
Ասեն նմա թէ յս՟ և ղազար կենդանա
ցեալ ընդ նմա. իսկ զաքեոս կամէր տե
սանել զնա և ոչ կարէր տեսանել՝ զի կար
ճէր հասակաւ. և ժողովուրդն բազում
և կայր 'ի վր՟ ճանապարհին ծառմի թզե
նի որ յս՟ անցանէր. գնաց զաքեոս և
ելաւ 'ի վր՟ ծառոյն զի տեսցէ զյս՟. իբրև
եկն յս՟ 'ի թզենին և հայեցաւ 'ի ծառն.
և ասաց զաքէ փութով էջ այտի. զի այ
սօր 'ի տան քում վայելէ ինձ ագանել.
փութապէս իջեալ 'ի ծառէն զաքեոս և
ընթերցաւ ընդ առաջ յս՟ իբրև եհաս
'ի դուռն զաքեոսի. ասէ զաքեոս. տր՟
գանձ բազում ունիմ զի կեսն տաց աղ
քատաց վն՟ քո սիրոյն. և այլ բազում
մարդկանէ զոր և տուգանք առեալ եմ.
միոյն չորս տացից 'ի նմ՟։ Եւ յս՟ ասէ՝ այ
սօր եղև փրկութի տանս այսմիկ քան զի
և սա որդի աբրահամու է. զի եկն որդի
մարդոյ խնդրել և կեցուցանել զկորու
սեալսն. իբրև օրհնեաց զսեղանն. ուտէր
յս՟ 'ի սեղանոյն զաքեոսի աշակերտօքն
իւր։

իւր։ Իսկ փարիսեցիքն զարմանային թէ
ընդ էր ուտէ ՚ի սեղանոյ մեղաւորին ընդ
մաքսաւորսն. և ընդ մեղաւորս քսմսէին և
ասէին. չէ այրդ այդ ընդ յսի թէ որ
դարեր գայ ոչ ուտէր զհաց մեղաւորին.
և այլք ասէին թէ այրս չէր արդար որ
կարէր զղազար կենդանացուցանել. այս
պէս քրթմնջէին։ Եւ գիտաց յս զչար
խորհուրդ նց. և ասէ ոչ պիտոյէ բժիշկ
ողջոց՝ այլ հիւանդաց. ոչ եկի կոչել զար
դարս՝ այլ զմ մեղաւորաց եկի կոչել որհ
նեաց զոտունն զաքեոսի և ել անտի իսկ ՚ի
Ջանապարհին յէմի. երկու կոյր մուրա
ցիկ նստէր. իբրև լուան թէ յս անցա
նէ՝ աղաղակեցին և ասէին տր յս որդի դաւ
թի ողորմեաց մեզ։ Ասէ ցնս յս զինչ կա
միք զի արարից ձեզ. և նոքա ասեն վար
դապետ լոյս աչաց խնդրեմք. ասէ յս
եղիցի ձեզ ըստ հաւատոց ձերոց. և նոյն
ժամայն բացան աչք երկոցունց կուրացն.
և նոքա գնացին ընդ յի։ Իսկ զհամբաւ
նր լուեցին ամ յէմ քս թէ գայ կոյրք լու
սաւորեալք և մեռեալք կենդանացեալք
շրջի ընդ յի։ Իբրև մօտեցաւ ՚ի լեառն
ձիթենեաց ամ ժողովուրդն յէմի ընդ յա
ռաջ գնացին. հարցանէին ցմիմեանս զինչ

 նուէրք

նուէրք տարցուք ընդ յառաջ նմ։ Իսկ
տեսանողքն ասէին թէ ոչ ինչ խնդրէ
՚ի մարդկանէ ոչ այլ ինչ· բայց հաւատ
խնդրէ. վս այնորիկ ծնէք և տղայք ոս
տովք և ձիթենովք ելին ընդ յառաջ նմ
օրհնէին և գովէին ասելով. ովսաննա օրհ
նեալ ես որ գաս ՚ի յանուն տն։ Իբրև եկն
յմ եմուտ ՚ի տաճարն. բերին առաջի նր
բազում կոյրս· կաղս բորոտս. հիւանդս·
դիւահարս. խուլս. և զհամրս· և որք
մերձենային նոյն ժամայն բժշկէին։
Իսկ տեսանողքն զարմանային և ասէին.
օրհնեալ ես թագաւոր անմահ որ գաս
յանուն տն։ Իսկ քահանայքն ասեն դո
քա զքէն հայհոյեն· դու մարդես և
զքեզ որդի ասեն այ. սաստեայ նց զի մի
ասիցեն։ Ասէ յս եթէ դոքա լռիցեն քա
րինքդ աղաղակեսցեն և ասիցեն. և նոյն
ժամայն քարմն զբերանն բացեալ ՚ի տա
ճարէն ձայնիւ աղաղակեաց և ասէ՝ օրհ
նեալ որ եկիր և գալոցես անուամբ տն·
նոյնպէս և քառասնօրեայ տղայքն լեզու
բացեալ ովսաննա երգէին և օրհնէին զգա
լուստ նր. և անտի ելեալ գնաց ՚ի տուն
ղամաղիկելի· և այնչափ ցաւագարք հի
ւանդք կոյրք և կաղք բերին մինչ զի

տեղ ոչ լինէր թէ մտանէր ոք և զամենե
տեան բժշկէր. և բերեալ անդ անդամա
լոյծ մի բարձրեալ ՚ի չորից երբ ոչ գտին
զտեղի մտանելոյ. ելին ՚ի տանիսն և իջուց
կախեցին. և ձայնեաց տր յս բժշկեա զծա
ռայս քո. և յս ասէ ըստ հաւատոյ ձերոյ
եղիցի. և նոյն ժամայն բժշկեցաւ. և ՚ի
նոյն ժամու ոմանք եկեալ էին ՚ի յաշխար
թագաւորէն առ քս և բազմութէ ժողո
վոյն ոչ կարէին մտանել տեսին զփիլի
պոս առաքեալն և խօսեցան ընդ նմա և
նա խօսեցաւ ընդ բարդուղիմէոսի և նա
ընդ յսի. և զնա մուծին ՚ի ներս և նքա
երկրպագէին յսի. և մատուցին զթղթերս և
զթուխտն աբգարու թագաւորին հայոց
Նա էր գրեալ այսպէս ես աբգար թա
գաւոր ծառայ յի թէպէտ ամենեքեան
տեսանեն և հաւատան. ես անտես հա
ւատացի զքեզ զի դու ես քս որդի այ,
որ գալոցէիր խոնարհեցար յերկնից և
իջեր յերկիր. և առեր մարմին ՚ի մրէ կու
սէն և մարդ եղեր վս մեղաւորաց առա
քեցաք առ քեզ ծառայք քո թղթով
մեծարք թուխտ մեր ոչ որպ թուխտ հրա
ման թագաւորաց. այլ ծառայաբար և
թուխտ պաղատանաց. աղաչեմ քեզ տր
գայցես

գայցես և բժշկեսցես զցաւս մարմնոյ
իմոյ. և զմեղս հոգւոյ մաքրեսցես: Իբրև
կարդացին զԹուղթն ասէ յն̃ հասեալ է
ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ:
Իբրև զայս լուեցին Թղթաբերքն պատկե
րահան կայր ընդ իւրեանց զի առաքեալ
էր 'ի Թագաւորէն եթէ ոչ գայցէ ք̃ս
նկարեսջիք և բերէք զպատկերն բժշկու
թեն ցաւոյս իմոյ: Իբրև լուեցին զպա
տասխանին յն̃ թէ ոչ կամի գալիսկ պատ
կերէհանին ըսկսաւ գրել զպատկերն. իբրև
նկարեաց զպատկերն հայեցաւ 'ի յերեսն
յն̃ չէր նմանիսկն որ գրեաց. և դարձեալ
նայեցաւ զի չէր նման այլ կերպս փոխե
ցաւ. Գ. անգամ գրեաց և իրեք անգամ
այլ կերպ փոխեցաւ: Իսկ նկարօղն 'ի վայր
եդեալ զգրիչն և ապուշ մնայ: Ասէ յն̃
ընդ էր զայրացեալ և զարմացեալ կաս.
ասէ ծաղկարարն ո̃ր կամեցայ զպատկերս
քո նկարել և ոչ կարացի ասէ յն̃ ընդ էր
նկարես զպատկերն իմ ասէ ծաղկարարն
զի մեր Թագաւորն փափաքէ զքեզ տե
սանել. զի այսպէս ասաց մեզ. եթէ ոչ
կամի գալ ք̃ս. նկարեսջիք զպատկերն և
բերէք: Իսկ յն̃ առեալ զջասատառակն և
արկ ընդ երեսօքն և ծ̃ք պատկերն իւր



նկարեալ

նկարեալ եղև ՚ի մ՟ջ դաստառակին. և ասէ
յ՟ս· արդ առ զդաստառակս տարեալ
տայց ես Թագաւորին ձերոյ· և ասասցես
նմայ թէ այսպէս ասէ ք՟ս թէ · դ՟ · ան
գամ բժշկեսցի ցաւ քո ՚ի հասանելոյ դաս
տառակին իմոյ առ քեզ բժշկեսցին կենիծ
քո· ՚ի յետ վերանալոյն իմոյ առաքեմ
առ քեզ առաքեալն Թադէոս զի քո տե
սանելն զնա արձակեսցի ձայն քո և ՚ի
մկրտեալն քում Թօթափեսցի ա՟մ խոց
քո և ելցեն մորթք քո և եղիցիս ողջ նո
րածին մանուկ անցաւ և անմեղ. և այլ
բազում սքանչելիս արար արմաւենեաց·
կիրակին· մեք սակաւ գրեցաք հաւատա
ցելոց բաւական լիցի· ամէն:

Պատմութիւն և կարգ չարչարանացն ք՟ի· որ եղև
առաջի պոնտացւոյ պիղատոսի. և յիշխանութեան հրէ
աստանի· Ի քահանայապետութեան անանայի և կայիա
փայի· Մատթէոսի երանելւոյն [illegible]
[illegible].

Ի յերրորդի իշխանութեան տիբերեայ
կայսերն հռոմայեցւոց ինն և տասն
երրորդի իշխանութեանն: Եւ ՚ի չոր
րորդ քահանայապետութեան երկուց առաջն
որդացն, աննայի և կայիափայի: Զոր


և

Եւ յետ չարչարանացն խաչի· պատմեաց
յակոբոս տն եղբայրն· յանօրէն հրէից
ժողովոյն· և այլոյն ամենեցունցն· զոր
առաջին վկայութե֊ մորգարէից· և յօրէ
նաց մեր ընկալեալ իմացաք, և ծանեաք
զգալուստ փրկչին մերոյ յի քի· որ եկն
և կատարեաց զամ֊ խորհուրդ տնօրէնու
թե֊ն ըստ մարդկան լինելով· զնշանս և
զսքանչելիսն զոր առնէր մարդկային բնու
թեա· 'ի վե֊ր հիւանդաց և ախտաժէտաց,
շնորհաւոր ամենեցուն զպարգևս ողորմու
թե֊ն իւրոյ: Իսկ անօրէն ազգն հրէից,
կուրացեալ և մոլոր 'ի Ճշմարտութենէ
անտի. և նախանձ չարութե֊ մտեալ 'ի
սիրտս նց֊. բազում ազգի խաբէու
թե֊ խորհուրդ արարեալ քահանայիցն և
անօրէն ժողովոյն. և ասեն ցմիմեանս
զինչ արասցուք· զի ահա երևելի նշանս
լինի 'ի ձեռս նր֊· և գնաց ամ֊ ժողովուրդն
զհետ նր֊ կէոքն ասէին զի արդ կարաս
ցուք ըմբռնել զնա· զի ամ֊ ժողովուրդն
կանխեալ կան զնմանէ 'ի լսել: Ասեն
քահանայքն. մի 'ի տօնի աստ խռովու
թի֊ լինի 'ի մէջ բազմութե֊ ժողովոյս:
Այլ ոքն ասէին· եկայք գանձիւք հաւա
նեցուցուք սիրտ դատաւորին· և նա արաս

ցէ զկամս սրտից մերոց· ոմանք ասէին,
ո̅պ կարասցուք ասել չար ինչ զնմանէ·
զի գիտեմք որ այր մէ է, արդար և ան
մեղ: Ասեն քահանայքն. զի արդ վկայեք
զնմանէ թէ արդար և մէ է· և այլ զոր
ինչ կամիք ստութե̄ չարա խօսեսցուք
զնմանէ և ազգի ազգի խորհրդով հնար
էին բանս ինչ նենգութե̄, վկայել զնմա
նէ: Իսկ առաջին աւուր բազարջակե
րացն. և մերձենալն մեծի պասեքին· եկն
փրկիչն աշակերտօքն 'ի վերնատունն, կա
տարել զխորհուրդ մեծի աւուր տօնին:
Իսկ ոմն աշակերտացն, որում անուն էր
ոչ յուդայս արկեալ սատանայ 'ի սիրտ նր̄.
զի եկեալ մատնեսցէ զնա ն̄յ̄. և եկեալ մե
կուսի ամբոխէն, ոչ յայտնեաց զխոր
հուրդ չարութե̄ ումեք. և ոչ ծանոյց
զբանս վն̄ այցելութե̄ ընկերաց իւրոց:
Զոր ինչ խորհէր 'ի ծածուկ սրտին, ժո
ղովրդեան զնենգութի̄ յանձնէր: Եւ
եկեալ անօրէն աշակերտն 'ի մէջ բազ
մութե̄ ամբոխին հանդիսին· ուր քահա
նայքն և դպիրքն և ծերքն ամենեքեան
ժողովեալ էին· և եկեալ 'ի մէջ նր̄ ան
խոյաբար, մերթ ընդ մերթ, կաշառա
զայսր և անդէ նայելով, ոչ կարէր հա


մարձա

մարմնակրութե՟ խօսել ընդ նմ՟։ Իբրև տե
սին զնա ամ՟ բազմութի՟ ժողովրդն զար
մացան և հիացան ընդ միմեանս պշու
ցեալ հայէին։ Ասէն ցնա քահանայքն.
Նիստ ընդ մեզ պատուով 'ի հանդիսի
տեղւոջս. Իբրև նստաւ ասէ քահանայ
նապետն կայիափայ ընդ յուդաս. ասա
զամ՟ զինչ ուսոյց ձեզ վարդապետն ձեր.
և կամ զինչ խոստանայ տալ ձեզ զարքայ
ութիւն զոր ոչ ունի և յուդաս լուռ կայր
և ոչ ետ պատասխանի, ասէն քահանայքն
ընդ էր ոչ խօսիս ընդ մեզ. կամ վս՟ որոյ
իցէ եկեալ ես աստ։ Իսկ անօրէն աշա
կերտն, զչորացեալ բերան իւր մահա
բեր բացեալ. և ասէ զինչ խնդրէիք յի
նէն զի ասացից։ Ասէն քահանայապետն.
յաղագս վարդապետին քո հարցանեմք.
թէ զինչ ուսուցանէ ձեզ. կամ զինչ
հրամայէ առնել ձեզ. և կամ վս՟ մեր
զինչ ասէ։ Ասէ չ յուդայ. զոր ինչ ասէ
նա ով կարէ ապրիլ. ասէն քահանայքն
թէ ոպ՟. Թուղուլ զհայր և զմայր, զկին
և զորդիս և զաշխարհս. և ատել զանձն
իւր. և առնուլ զխաչն և զմահն. և եր
թալ զհետ նր՟. Իբրև լուան զայս բազ
մութի ժողովրդն. խնդութե՟ լցան և



ասէն,

ասէն , թէ բարուոք զոր ասէ , թէ կարես
առնել ։ Ասէ չյուդաս . ես յանձնէ իմմէ
գիտեմ որ ոչ կարեմ առնել . կամ զկնի
նր շրջիլ . զի դժուարին է ։ Ասէն քահա
նայեապետքն . ազգն քո և տմ ցեղ ծնըն
դոց քոց ՚ի տոհմէ լւի ՚ի ցեղէն աբրա
համու . ընդ էր մի բանեալ խառնես ՚ի
յազգս որդոց օտարաց եկ մի բանեայ
ընդ բազմութին ժողովոյս . և զոր ինչ ՚ի
մէջ ժողովյս խնդրես փաղփաղակի արատ
ցուք . ասէ յուդաս կամք ձեր լիցի ։
Ասէն քահանայքն . ասա մեզ յուդաս
զխորհուրդ քո . զի քահանայքն և ժողովս
բազում խորհուրդ արկեալ էմք ՚ի տօնի
աստ ըմբռնել զնա ։ Արդ եթէ պատ
ճառ զինչ նշան մահու գիտես զնմանէ .
պատմեա մեզ . և զոր ինչ կամիս արատ
ցուք քեզ ։ Ասէ չյուդայ . զինչ կամիք
տալ ինձ . և ես մատնեցից զնա ձեզ . իբրև
լուան զայս քահանայք և տմ բազմութին
ժողովոյն . ասեն օրհնեալ է տր տծ իմ .
զոր ինչ խորհեցաք առնել ընդ կամաց
մերոց յաջողեցաւ մեզ ։ Յայնժամ խոս
տացան նմայ տալ արծաթ և ոսկի . և բա
զում ինչ պատուականս , և ասեն զկամն
սրտից մերոց հաճեցուցանես . դու ինք


նին

նէ՛ն լինիս առաջնորդ և քահանայապետ ՚ի վե՛ր ազգաց տանն իմի։ Ասէ յուդաս զոր ինչ խնդրէք արարից ձեզ. և դուք յառաջ զկամս սրտի իմոյ ուրախութիւն առաքէք. ասեն քահանայքն երդուեսցեմք ՚ի յօրէնս մովսեսի և ՚ի պատուիրանս. զոր ինչ խնդրես ՚ի մեզանէ կրկին ևս հատուսցուք քեզ։ Ասէ յուդաս այժմ երթամ ես առ ընկերակիցն իմ. և զոր ինչ լուայց ՚ի բերանս նր զամ ըստուգիւ եկեալ պատմեցից ձեզ. և դուք պատրաստ լերուք ամենեքեան զգուշութ հանդերձ զասուք և զինուք. զի ահա հանդերձեալէ այսօր գալ ՚ի վերնատանն և կատարել զօր մեծի պասեքին. և զոր ինչ կարացից որսալ բան ՚ի բերանս նր փութով դարձից առ ձեզ և պատմեցից զամ։ Եւ այսպէս անօրէն աշակերտն եղեալ դաշինս միաբանութ ընդ անօրէն ժողովոյն հրէից։ Իսկ յս հանդերձ աշակերտօքն եկն ՚ի վերնատունն. և բազմեցաւ ընդ առաքելոյն և յուդաս ընդ նմ բազմեցաւ։ Յայնժամ փրկիչն արկեալ ջուր ՚ի կոնքն. և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն. և յուդայի ընդ նմին։ Իբրև բազմեցան և ընթրէին։ Առեալ յս զհացն և զբաժակն



և

և ասաց. այս է մարմին և արիւն իմ. և
երբև զայս ասաց, էարբ և ետ առ առա-
քեալսն և ասէ արբէք ամենեքեան։ Իսկ
անօրէն աշակերտն թողեալ զգութ վար-
դապետին իւրոյ. և զսէր միաբանութեն
եղբարցն, և յիշեաց զուխտ և զերդումն
իւր զոր եդեալէր 'ի յանօրէն ժողովոյն
հրէից։ Եւ նենգութբ մնեալ պղծեան
իւր· առեալ մասն ինչ ծածուկ 'ի խոր
հրդոյն զի տարց է առ քահանայսն 'ի
հայհոյութն և 'ի նախատինս փրկչին.
Իսկ որոտադէմն և մմ խորհրդոց քննողն
ոչ կամեցաւ ծածկել զնենգութն աշա
կերտին։ Ասէ փրկիչն ամէն ասեմ ձեզ
մի ոմն 'ի ձէնջ մատնելոցէ զիս 'ի մահ
երբև լուան զայս աշակերտքն, տրտմե
ցան յոյժ. և տարակուսեալ ընդ միմեանս
ասեն. մի թէ ես իցեմ վարդապետ։
Ասէ յս. ամէն ասեմ ձեզ. որ յառաջ
մխեաց զձեռն 'ի սկաւառակն. նա մա
տնելոցէ զիս. ասէ յուդաս. մի թէ ես
իցեմ վարդապետ։ Ասէ յս դու ասացեր.
երբև լուան զայս աշակերտքն հիացեալ
զարմացն. և ասեն ցնայ ով եղկելի և ողոր
մելի անձն. զինչ է գործդ այդ զոր
գործեցեր և զմեզ զամս մահաբեկ արա



րեր.

րեր · զի՞նչ պատճառ չարութե՛ մխատու-
տեսեալ ես առ վարդապետին մերոյ, որ
նայեցեալ լրբութե՛ չարիս մեծամեծս գոր-
ծեցեր մատնել զայնպիսի փրկիչն մեր
վայրաբար 'ի տարապարտուց · իսկ անօրէն
աշակերտն կամեցաւ եղանել արտաքս
առաքելական գնդէն · առեալ յե՛ զպա-
տառն, ապա եմուտ 'ի նա սատանայ . և
լրբութե՛ առեալ զպատառն ել արտաքս
վաղվաղակի և էր գիշեր ։ Իբր երթեալ
անօրէն աշակերտն առ քահանայսն և առ
դպիրս ժողովրդեանն և ասէ . ահա տեսէք
ամբքեանց զնշանն զոր ունիմ 'ի ձեռանէ
նր . և բազում հերձուածս և հայհոյու-
թի ինչ ունիմ զնմանէ ասել ձեզ ։
Ասէք յինէն զվկայութիս զայս, և տե-
սէք ամենեքեանց առէն քահանայք ասա
մեզ · զինչ ունիս զնմանէ · ասէ յուդաս
մինչ 'ի վերնատունն ժողովեալէաք մեծի
տօնի երեկօրեայ ։ Առեալ զհացն և զբա-
ժակն 'ի ձեռին իւրում . և ասէ այս է
մարմին իմ և արիւն իմ · ով որ խմանէ
ուտիցէ զմահ մի տեսցէ ։ Իբրև լուան
զայս բազմութի ժողովրդոյն, սկսան խօ-
սել և հայհոյել զնմանէ և ասէն զինչ և
այլս ողէտոյէ մեզ վկայութի եկայք կալ

ցուք զնա զգուշութե̃ և տարցուք առա
ջի պիղատոսի դատաւորին և զինչ հրա
մայ է արասցուք նմա ասեն միբան այս
կամք ձեր լիցին ։ Յայնժամ քահանայիցն
առեալ զօրէնսն և նզովեցին զանձինս
իւրեանց․ եթէ ՚ի տօնի աստ ոչ կերի
ցուք և ոչ արբցուք․ մինչև սպանցուք
զյս̃ նազովրեցին ։ Իսկ փրկիչն յետ ընթ
րեացն առեալ զաշակերտսն իւր․ եկն ՚ի
տեղի մի արտաքոյ քաղաքին որ անուա
նեալ կոչի գեթսեմանի․ և ասէ աշակեր
տացն, նստարուք դուք աստ, մինչև եր
թեալ կացից յաղօթս․ և դարձեալ յս̃
առ աշակերտսն և գտանէ զնս̃ ՚ի քուն
թմրութե̃․ զի էին աչք նց̃ ծանրացեալք ։
Ասէ ցնս̃․ յս̃ ոչ կարցէք արթուն կալ
ժամ մի ընդ իս, զի մի անկանիցիք ՚ի փոր
ձութի̃․ ասէ պետրոս տր̃ ընդ քեզ պատ
րաստեմ ՚ի մահ և ՚ի բանտ մտանել ։ Ասէ
յս̃ չև լիցէ հաւու խօսեալ մինչ դու երիցս
անգամ ուրասցիս զիս չգիտել ։ Ասէ պետ
րոս տր̃ եթէ մեռանիլ հասանիցէ ինձ
զքեզ ոչ ուրացայց նոյնպէս և ամ̃ աշա
կերտքն ասէին ։ Եւ ասէ յս̃ ահա եհաս
ժամ, և որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս
մարդկանց ․․․ աշակերտսն առ

եալ

8120-57
947 399
Библиотека
ССР

եալ զքահանայսն. և զդպիրսն, և այլ
բազմութիւն ժողովրդեանն. հանդերձ
սուսերօք և բրօք. ջահիւք և լապտերօք.
և տուեալ էր նց՟ նշանս յուդաս ընդ որում
ես համբուրեցից զնա կալարուք. և տար
ցուք զնա զգուշութ՟բ: Եւ իբրև հասին
ընդ նմ՟ ասէ յս՟ զո՞ խնդրէք. և նոքա ասեն
զյս՟ նազովրացին: Ասէ յս՟ ես եմ. զայս
ասացեալ յս՟ և նոքա ամենեքեան զարկան
զգետնի: Եւ յս՟ փչեաց ՚ի վր՟ նց՟ և ամե
նեքեան կանգնեցան. դարձեալ ասէ յս՟
զո՞ խնդրէք. և նոքա ասեն զյս՟ նազովրա
ցին: Յայնժամ յուդաս համբուրեալ
զնա, և ասէ ռաբբի ռաբբի որթարգմա
նի վարդապետ ողջլեր. և ապա զինո
րացն ձեռն արկեալ, կալան զյս՟ և կա
պեցին. և առեալ տարան ՚ի սրահ քահա
նայապետին կայիափայի: Եւ ժողովեցան
բազմութին քաղաքին ամբրկացուցին զհան
դերձս. և զգեցուցին նմա այլ հանդերձս.
և պսակ ՚ի փշոց եդին ՚ի գլուխ նր՟ և ծունր
իջեալ կատակէին զնա և ասէին ողջ լեր
արքայ հրէից և բազում հայհոյութիւ
խօսէին ՚ի նա և այնպէս զգիշերն ամ՟ տան
ջէին զնա մինչև ցառաւօտն: Իսկ ոչ
յուդաս իբրև տեսեալ զայն ամ՟ նախա

տխնոն և զանարգանոն զոր ինչ անցուցա
նէին ՚ի նա անօրէն ժողովն հրէից. յե
տոյ զղջացեալ զմտաւ եած և ասէ. մեղայ
զի մատնեցի զարիւն արդար. և դարձոյց
զարծաթն առ քահանայապետսն և ասէ.
մեղայ մեղայ. զի մատնեցի զարիւն ար
դար: Եւ նոքա ասեն մեզ չէ փոյթ. դու
գիտես. և յուդայ ընկեց զարծաթն ՚ի
տաճարն. և ինքն չոգաւ խեղդեցաւ. և
եղև փառս սատանայի կորուստն յաւիտե
նից: Իսկ քահանայապետքն և ամ ժո
ղովուրդն զինչ արասցուք ահաւասիկ
դատաւորն աստ և մեզ ոչ է պարտ առ
նել ՚ի յանձնէ և ոչ ինչ եկայք արկցուք
զձեռս մեր ՚ի գանձս ոսկի և արծաթ և
այլ ինչ ստացուածոց մերոց և հաճոյա
ցուք զմիտս դատաւորին զի կարասցէ նա
պատասխանի տալ մեզ իւր արքունուստ.
և ասեն միաբան այո բարիոք է. յայնժամ
յարուցեալ քահանայապետքն աննա և
կայիփայ. սիմոն և ովդայէլ յուդաս ղևէ
նեփթաղիմ, գադ աղէքսանդրոս. և այլ
բազում մեծամեծք ՚ի ժողովրդենէն. որք
էին յառաջախօսք և գլխաւորք քաղաքին.
հանդերձ բազմութբ ծերոց և տղայոց
՚ի փարիսեցւոց և ՚ի դպրաց եփրայեցւոց
աննայի

աննայի և կայիափայի. և այլ խառնի ջա
ղանջ չար ժողովոյն. և եկեալ կացեալ
առաջի պիղատոսի դատաւորին. և սկսան
ամբաստանել զյս և ասեն ով դատաւոր
գիտեմ զքեզ որ բարեկամես կայսերն և
իք նակալ տէրութեն նր և յաշս սիրեցեալ
երևիս և փառաւոր մեծաւ պատուով. և
ես կարգեալ 'ի նմանէ դատաւոր և իշխան
'ի վր մեր արդարև եթէ կամիս խաղա
ղութն և սէր միաբանութեւս մեր առ մի
մեանս. լուր մեզ աղաչեմք զքեզ. գիտեմք
զորդին յովսեփայ հիւսանն 'ի կնոջէ մա
րիամայ ծնեալ. և ասէ զանձնէ թէ որդի
այ եմ ես թագաւոր իղի. և ոչ միայն
զայս առնէ, այլ և զշաբաթն լուծանէ.
և զմովսէսական զօրէնսն խափանել կամի.
աղաչեմք զքեզ բարձ զնա 'ի միջոց մերոց,
զի մի աւերակութի ածէ խաբէութբն
իւրով աշխարհիս այսմիկ: Ասէ պիղատոս
զինչ անուն նր. և կամ յորմէ ազգէ իցէ
և կամ որ ժողովրդենէ: Ասեն հրէայքն
զանուն նր յս կոչեն 'ի նազարէթ քաղա
քէ. և 'ի մերմէ տոհմէ. և իցեղէ տանն
իղի. 'ի յորդոցն յակոբայ և 'ի ցեղէն յու
դայի: Ասէ պիղատոս եթէ այդ այդպէ
սիցէ բարիոքէ որ և ազանց և 'ի տոհմէ



ձերմէիցէ

ձերմէիցէ։ Ասեն քահանայքն ով դատա
ւոր. ոչ եթէ ըստ աւանդութեն կրօնից
մերոց վարի. և կամ ազգիցս իցէ սիրող
և կամ բարի խնամք տանի ումեք. այլ հա
նապազ հակառակ և հայհոյիչ և յանդի
մանիչէ օրինաց մերոց՝։ Ասէ պիղատոս
զինչէն հայրենի օրէնքն ձեր։ Ասեն քա
հանայքն յօրէնս ունիմք մեք զօր շաբա
թու պահել և պատուել զօրն այն. և ոչ
ինչ գործել և ոչ զոք բժշկել 'ի հիւանդ
ութե ախտից ցաւոց. բայց նա զկաղս
և զկոյրս զանդամալոյծս և զգլորեալս.
զբորոտս և զդիւահարս. և այլ զա̃մ ոք
նեղեալսն 'ի ցաւոց առողջացուցանէ 'ի
յաւուր շաբաթու չար գործովք իւրովք։
Ասէ պիղատոս. ո̃ չար գործք լինի այդ.
և ն̃ք ասեն կախարդէ և բեհեղ զեբուղա
եչխանաւ դիւացն հանէ զդեւսն 'ի մարդ
կանէ։ Ասէ պիղատոս այդ բանդ ոչ իցէ
դիւահարի այլ զօրութե̃ ասկղեպիա և
ագղիպաւ առնէ զա̃մ։ Ասեն քահանայքն
ով դատաւոր աղաչեմք զքո մեծութի̃դ
հրամայեայ զի եկեսցէ առաջի քո. քեզ
նէն լուիցես զոր ինչ առէ։ Ասէ պիղա
տոս և զի ուրիցէ նա. ասեն միաբան ահա
ւասիկ իսրահ քահանայապետին կայիա
փայիէ։

փայլէ։ Ասէ պիղատոս և զինչ պէտս կո
չեցարուք զայնպիսի այր արդարն և ան
մեղն առանց իւիք պատճառանաց։ Ասեն
քահանայքն. եթէ ոչ դոյր 'ի մէջ նր̃ վնաս
մահու ոչ մատնէաք զնա 'ի քեզ։ Ասէ
պիղատոս. ես կարծեմ եթէ թագաւոր
ոմն ասեն զնմանէ. և զի արդ իշխեցին
բանութ̃ կոչել։ Ասեն միաբան լուր տր̃
աղաչեմք զքեզ, ինքն ասէ զանձնէ իւր
մէ թէ թագաւորեմ և որդի այ̃. և այն
խառնիճաղանճ ամբոխն որ զնովաւ շր
ջէն որ ոչ գիտեն զօրէնս. և նզովեալք
են 'ի մէջ մեր և որոշեալք են և զնի նր̃
շրջէին այժմուս։ Ասէ պիղատոս. այժ
արարէք զկամս ձեր ում̃ և ասէքդ հրա
մայեաց կոչել զմի իշխանաց իւրոց, որում
անուն էր փեստոս. որ էր արքունեաց
գլուխ կարգեալ 'ի զօրացն. առաքեաց
զնա և ասէ. երթ քաղցրութ̃ և կոչեա
զյս̃ արքայն հրէից զի մտցէ այսր. նոյն
ժամայն աղաղակեցին ամ̃ բազմութի̃ ժո
ղովոյն և ասեն. ով դատաւոր գիտեմք
զքեզ որ բարեկամ ես կայսերն ընդէ՞ր
կոչես զնա թագաւոր 'ի մէջ մեր. այլ ինքն
զանձնէ իւրմէ ասէ թագաւոր եմ։ Ասէ
պիղատոս ցփեստոս երթ լռութ̃ և ած



կա մեծա

կամիս կոչեա զնա. իբրև գնաց Նըւիրակն
և ծանեաւ զյս̃. և խոնարհեալ երկիր֊
պագ նմա և ասէ. ով արքայդ իմ, դա
տաւորն կոչէ զքեզ զի եկեսցես առ նմա
լռութե̃ և հեզութե̃ քան զի քահանայք
և ա̃մ բազմութե̃ քաղաքին ժողովեալ են
անդ և խնդրեն զքեզ փութով տեսանել։
Եւ իբրև եկն մտանել յառաջին դատա
ւորին առեալ փեստոս զփակեղն իւր տա
րածեաց զնա 'ի գետնի և ասէ ցյս̃ տր̃ 'ի
վր̃ փակեղին այս եկ և մուտ պատուով
առ դատաւորն. և տեսին զնա հրեայքն
զայն զոր արար Նըւիրակն. աղաղակ բար
ձին և ասեն զինչ է այս. մեք գիտեմք
եթե կապանօք կամիս առնել և ածել
այսր. և դու քաղցրութե̃ ա̃ծաբար կո
չեցեր զնա և ածեր այսր։ Ասէ փեստոս՝
ո՞չ առաքեաց զիս կոչել զնա պատուով
արքունեաւս այնպէս արարի։ Ասէ պիղա
տոս՝ ո՞չ տեսար և ծանեար։ Ասէ փես
տոս՝ և զինչ արարք զթագաւորն և զար
քայն հրեից հզօրն ով կարէ բռնութե̃
հաւանեցուցանել. ասեն միաբանութե̃
միայտուպէս հակառակ խօսիր ընդ մեզ և
զհրովմանս մեծի դատաւորին յանդիմա
նել. զի 'ի դրանց արքունեաց ասես։ Ասէ

 պիղատոս

պիղատոս ցփեստոս. տաս զինչ տեսեր ՚ի նմանէ և կամ ո՞չ խօսիս զնմանէ: Ասէ փեստոս. լուր ինձ դատաւոր. յորժամ առաքեցեր զիս առ աղեքսանդր քաղաքին, և յաւուր միաշաբաթին տեսի զնա նստեալ ՚ի վերայ յաւանակի և մանկունքն եբրայեցւոց ելանէին ընդ առաջ նր և ծերքն ոստովք ձիթենեաց. և բազումք ՚ի նոցանէ զհանդերձս իւրեանց տարածանէին ՚ի ճանապարհին և ասէին ովսաննա ՚ի բարձունս օրհնեալ որ եկեր թագաւոր իէլի: Ասեն հրեայքն դու այր հռոմայեցի ես ո՞չ լուար թէ թագաւոր իէլի կոչէին զնա: Ասէ փեստոս հարցի զոմն ՚ի հրեից անտի, և ասացին ինձ հրեական բառով թէ այս է. մարգարէն որ ՚ի նազարէթէ ՚ի գալիլեացւոց: Ասէ պիղատոս՝ զի արդ աղաղակէին հրեայքն: Ասէ փեստոս. ասէին և գոչէին ձայնիւ հնչմամբ մեծաւ, օրհնութի որդւոյ դաւթի օրհնեալ որ գաս թագաւոր իէլի: Ասէ պիղատոս ցհրեայսն ասացէք ինձ զինչ է այդ որ ՚ի բերանոյ մանկանց և ՚ի տաղոյց ծերոց զնա թագաւոր իէլի կոչէն: Ասեն քահանայքն, մի թէ ոք իշխանաց հաւատոց ՚ի նա և կամ ժողովրդոցս. այլ այն խաժամուժ ժողովուրդ ամբոխին,



որ

որ ոչ գիտէին զօրէնս. և 'ի միջոց մերձ
որոշեալ էին. և տղայքն անմեղ մանկունք
սորնգեայք, ընդ խաղարկեալ շրջէին
ընդ նմա: Ասէ պիղատոս գիտեմ որ սա
փորձութն է ձեզ վս նախանձու ձերոյ
տանէք զայս և նք լսեցին: Ասէ պիղա
տոս ցյիսուս. ել արտաքոյ դրանն և տես
կամիս ած զյս. և ելեալ նուիրանն ըստ
առաջին սովորութեն, տարածեալ զփա
կեղն 'ի վեր գետնին. և ասէ տր 'ի վեր փա
կեղանս եկ և մուտ առ դատաւորն: Եւ
երբև եմուտ յս դրօշակիրքն ունէին
զդրօշսն և խոնարհեցուցին դրօշքն զգլու
խս իւրեանց. և երկիրպագին յն: Իսկ
պիղատոս երբև ետես զայն զահի հա
րեալ ասէ ցհրէայսն, տեսանէք և ահա
զարմանք մեծ է. զի խոնարհեցուցին
դրօշքն զգլուխս իւրեանց և երկիր պա
գին յն: Եւ տեսեալ զայն հրէայքն ա-
ռաւել աղաղակէին զդրօշակրացն և ասա
ցին ինքեանք նենգութբ արարին և խո
նարհեցուցին զգլուխս իւրեանց և երկր
պագին: Յայնժամ պիղատոս կոչեաց
զդրօշակիրքն և ասաց. զի արդ իշխեցէք
ինձ և առաջի իմ նենգութբ խոնարհե
ցուցանել զդրօշքն. ասեն արք այն ամե


նոքեան

նոքեան միաբան մենք հեթանոսեմք և
որդիք օտարաց զի արդ երկիրպագանեմք
նմա: Ասէ պիղատոս՝ և ընդէր խոնարհե
ցուցին զգլուխս իւրեանց դրօշքն և եր
կրպագին յն: Ասեն այրքն այն երդու
եալեմք 'ի գլուխ կայսերն որ մինչ դեռ
ունէաք զդրօշքն և ինքեանք խոնարհեալ,
և զմեզ ընդ իւրեանս երկրպագին. իսկ
և անօրէն զժողովքն ոչ հաւանեալ սքան
չելի նշանացն որ եղեն: Ասեն քահա
նայքն ով դատաւոր մի հաւատարնջ զի
դոքա որդիք հեթանոսացեն: Ասէ պի
ղատոս դուք ընտրեցէք 'ի ձեզնէն այրս
զօրաւորս քաջ և յաղթող ունելով առ
ինքն զդրօշքն ուժգին և ընտրեցին այն
պէս. ընտրեցին երկոտասան այրս 'ի
հրէից որ ոչ հաւատացին յն. այլ նեն
գութե կային 'ի մէջ ամբոխին. և առ
եալ զդրօշս 'ի ձեռին իւրեանց պինդ
բռնելով: Եւ ասէ պիղատոսի ցնըւիրակն
հան զյս ընդ յապարանսն և կրկին մուծ
զնա աստ: Եւ դարձեալ ասէ ցդրօշա
կիրսն երդուեալեմ 'ի գլուխ չածացիմոց,
և 'ի գլուխ կայսերն. որ թէ խոնարհեցու
ցանեն զգլուխս իւրեանց դրօշքն 'ի մտա
նելն յն նոյն ժամայն գլխատեցից զձեզ:

Յայնժամ հրամայեաց պիղատոս ցինեա
տոս կրկին անգամ մուծանել զյս՟ առ
ինքն · և որպր նըւերակն ըստ առաջին
սովորութե · տարածեաց զփակեղն 'ի
գետնի և ասէ · ով տր 'ի վր փակեղանս
ել և մուտ առ դատաւորն ։ Իբր երբե
եմուտ յն յայնժամ խոնարհեցուցին
դրօշքն զգլուխս իւրեանց և երկրպագին
յն իբրև ետես պիղատոս զարհուրեցաւ
յոյժ . և կամեցաւ արտաքս ելանել յատե
նէն · մինչ դեռ զայն մտաւ ածէր, առա
քեաց առնա կինն իւր և ասէ · ոչ ինչ
կացցի և առն արդարոյդ այդմիկ · զի բա
զում անցս անցին ընդ իս այսօր անուրջս
վս նր ։ Իսկ պիղատոս կոչեաց զմ՟ բազ
մութն ամբոխին և ասէ ցնս · կինն իմ
հրէայ է իբրև զձեզ, և նք ասեն այո · ասէ
պիղատոս ահա կինն իմ առաքեաց առ իս
և ասէ . ահա այսմ գիշերիս անուրջս բա
զումս չարչարանս կրեցի վս նր ։ Ասեն
հրէայքն ոչ յառաջ իսկ ասացաք թէ կա
խարդ է և խաբեբայ, և բազում հնարիւք
պատրէ զմիտս ան մեղաց և անըզգայից ·
ահա 'ի տեսլեան գիշերի զարհուրեցոյց
զմիտ կնոջն քո . և դրօշքն մոլեգնեալ
դարձոյց յերկրպագութի ։ Իսկ պիղատոս
դարձեալ

դարձեալ եկն յապարանս իւր · կոչեաց
զյս՟ առ ինքն և ասէ ցնա զի՞ վկայեն վս՟
քո և դու ընդէր ոչ տաս պատասխանիս ։
Իսկ յս՟ ասէ ցնա ես չար ինչ ոչ գիտեմ
և խօսեցայց զումեքէ · և ոչ զոք դատա
պարտեմ. է որ դատէ զնս՟ · բանն զոր
խօսեցայ ոչ 'ի յանձնէ խօսիմ. այլ որ
վկայէ վս՟ իմ, այլ իւրաքանչիւրոք ունի
իշխանութին բերանս իւր խօսիլ ինչ և
կամի · պատասխանի ետուն ամ՟ ժողով
ուրդքն և ասեն զինչ ասեմք · Նախ և առաջ
վկայեմք որ 'ի պոռնկութէ ծնեալ ես ·
երկրորդ 'ի ժամ ծննդեան քո յորժամ
հերովդէս խափեցաւ 'ի մոգուցն առաք
եաց և կոտորեաց զմանկունսն բեթղեհեմի
վս՟ քո · զի հայրն քո յովսէփ է և մայր քո
մարիամ, 'ի յեգիպտոսփախեան վն՟ քո · զի
չունէին հրաման համարձակութե՟ կալ
'ի մէջ ժողովրդեանն · իսկ որ անդ կային
հրէայքն երկեւղածք վկայեալ ամ՟ ազգաց,
աղաղակեցին միաբան և ասեն. Մենքչենք
ասէր զդմանէ եթէ 'ի պոռնկութէ ծն
եալ, այլ գիտեմք որ մայր դորա մարիա
մէ որ խօսեալ տրւաւ յովսեփայ · և 'ի
ժամ ծննդեան դորա, բազումք վկայե
ցին թէ 'ի կուսէ ծնաւ անարատ և անա
պական ։

պական ։ Ասէ պիղատոս ընդ հրէայքն
որս վկայութե բանից ձերոց հաւատամ,
որ ոչ էք նման միմեանց ․ զոր ազգակիցքն
ձեր պատմեն թէ 'ի կուսէն ծնեալ եղե
յն ։ Իսկ քահանայքն և այլ բազմութին
ժողովրդեան աղաղակեցին և ասեն եթէ 'ի
պոռնկութէ ծնեալէ և կախարդէ ․ և մեզ
ոչ հաւատաս ․ այլ սոքա որ վկայեն վն
նը՞ն աշակերտեալեն նմա ․ և որդիք օտա
րացեն ։ Եւ ասէ պիղատոս զինչէ և եկքն
ասեն հրէայքն ․ դոքա յառաջ որդիք հե
թանոսացէին ․ և այժմ եղեն հրէայք ։
Եւ նք պատասխանի ետուն միաբան և
ասեն ․ մեք ոչ եմք որդոց օտարաց լեալ
այլ զաւակ աբրահամուեմք և որդիք իէլի ․
և զճշմարիտն ասեմք որ 'ի պոռնկութէ
ոչ է ծնեալ ․ կոչեաց պիղատոս զնա և ասէ
երդուեալեմք օրէնս մովսէսի և 'ի պատո
ւիրանն նր ․ և 'ի գլուխ մեծի կայսերն,
որ ճշմարիտ ասէք ինձ յն ծնեալ մարիա
մայ կուսէն անապական ․ ասեն հրէայքն
ով դատաւոր մեք յօրէնս ունիմք չերդ
նուլ ինչ ոչ իրաւամբք և ոչ 'ի տարապար
տուց, զի մեզ ծանր մեղք են ։ Ասէ պի
ղատոս ցհրէայսն այնոքիկ որք վկային
թէ 'ի կուսէ ծնեալէ եթէ ճշմարիտե



բանք

բանդ զոր ասէք, ընդէր ոչ երդնուք։
Ասեն նք թէ յօրէնս մեր դատեն զմեզ.
ոչ ստութե և ոչ իրաւամբք երդուեցեն
'ի բախտ կայսերն որ վկայեն զնմանէ թէ
մահապարտ է. և ոչ ծնեալ 'ի կուսէ. և
մեք արժանի և պատրաստ լինցուք մահու։
Ասէ պիղատոս ցաննա և կայիափայ, զինչ
ունիք բանիդ առ այս տալ պատասխանի
Ասեն քահանայքն մեզ ոչ է արժան
երդնուլ. բայց սոքա երկոտասան այրքս
հաւատալի են քան զամենեսեան, որք
ասեն զնմանէ թէ այսպէս է։ Հայնժամ
հրամայեաց պիղատոս զբազմութի ժո
ղովրդեանն յարտաքս հանել. և կոչեաց
գաղտ զերկոտասան այրսն որոց անուանք
նեն այսոքիկ. ղազարոս. ասդերիոս. անդ
րէոնիկոս. անովբաս երանասուէլ՝ իսա
հակ. փենեհեզ կրոպոս յուդաս. և այլ
զկնի նց էին. կոչեալ զնս առ ինքն պի
ղատոս և զյս մեկուսի կացուցեալ, և ասէ
ցնս. ասացէք ինձ զճշմարիտն վս որոյ
պատճառանաց կամիքն զյս սպանանել.
և նք միաբան ասեն, վս նախանձու և չար
գործոց իւրեանց որ առնէին. և պատո
ւիրանապահութե շաբաթուն որ բժշկու
թի առնէր։ Ասէ պիղատոս ապա եթէ


ուրեմն.

ուրեմն, այդէ պատճառ մնասու. Նր մի
բարի գործոց կամին սպանել: Ասեն
այլքն այնոքիկ այծ մն հակառակութն
քօ և կայսերն գործեն զայն: Եւ ել ովք
զատոս յարտաքսքան զապարանն և ասէ,
ցմն վկայ ունիմ զարեգակն. և երդուեալ
եմ՝ի բախտ կայսերն և՝ի զօրութին չածոցն
որ ոչ ինչ գտանեմ մնսպս մահու առն
այնմիկ. պատասխանի ետուն հրէայքն
և ասեն ոչ էր արժան մահու այրն այն
ոչ մատնէաք զնա՝ի քեզ. ասէ պիղատոս
առէք զդա՝ի ձեզ և ըստ օրինաց ձերոց
դատեցարուք: Ասեն հրէայքն յայլ ոչ
կարեմք մեք յօրէնս ունիմք յաւնել
յանձնե և ոչ ինչ բայց միայն հրամանա-
դատաւորին կարեմք դատել զմն ոք:
Ասէ պիղատոս մի այդ պէս խորհիք ս-
նել, զոր չէ արժան դատել արքուն ուստ
զդա անմեղ է: Ասեն հրէայքն եթէ մեք
յանձնէ ինչ գործեմք, ապա հակառակ
լինիմք կայսերն. այլ պատճառ և մնաս
մերոյ ազգիս, յառաջ ծանուցանեմք ձե-
րոյ ինքնակալ մեծութեդ: Իբրև լուաւ
զայս պիղատոս եթէ խռովութի լինի ժո-
ղովրդեանն. դարձեալ եմուտ յապարանն
կոչեաց զյս և ասէ դու ես թագաւորն
հրէից:

հրէից ։ Պատասխանի ետ յս̄ և ասէ , յանձնէ ասես զայդ , եթէ այլոք ասացին քեզ . ասէ պիղատոս մի թէ ես հրէայիցեմ . ազգն քո և քահանայապետքն մատնեցին զքեզ ինձ . զինչ չար արարեալ է քո վս̄ նչ̄ , որ այսպիսի հակառակ կան քեզ . պատասխանի ետ յս̄ և ասէ . իմ թագաւորութիւն չէ այսմ աշխարհի . եթէ աշխարհէ աստի էր նա սպասաւորքն իմ արդեօք մարտնչէին ընդ իս զի մի մատնեցայց նչ̄ ։ Ասէ պիղատոս եթէ այս այդպէսիցէ ապա թագաւոր ոմն ես դու ։ Պատասխանի ետ յս̄ . դու ասես եթէ թագաւորեմես . բայց ես 'ի յայդ իսկ ծնեալ եմ . զի ամ̄ որ 'ի ճշմարտութէ է լսէ բարբառոյ իմոյ ։ Ասէ պիղատոս զինչ է ճշմարտութի յս̄ ասէ ճշմարտութի յերկնիցէ ։ Ասէ պիղատոս յերկրի ճշմարտութի ոչ գո ։ Ասէ յս̄ եթէ յերկրի ճշմարտութի գոյր ընդէր արդեօք այսպէս դատիմ , որ և ճշմարտութի խօսիմ ։ Եւ պիղատոս զարմացեալ բանիցն զոր ասաց յս̄ , և թողեալ զնա յապարանս և ել յարտաքս առ հրէայսն և ասէ . ես ոչ ինչ մեղս գտանեմ 'ի նա ։ Ասէն հրէայքն սա ասէր թէ ես կարողեմ քակել զտաճարս

զայս և զերիս աւուրս կանգնել։ Ասէ պի
ղատոս զոր տաճար․ ասեն հրեայքն զայն
տաճարն զոր սողոմոն շինեալ․ խ․ և զ․ ամ
դարձեալ ասէ ցնոսա պիղատոս անպարտեմես
յարենէ արդարոյն այնմիկ դուք գիտէք․
ասեն հրեայքն արիւն դորա ՚ի վր մեր և
՚ի վր որդոց մերոց եղիցի։ Ասէ պիղատոս
որոց ազգէ էք դուք անզգամ և անհնա
զանդ և ապստամբութի ձեր, ոչ զայդ
անմեղն արժանի առնէք մահու․ զի
գիտեմ որ չարութեդ ձեր վս բժշկութե
և վս լուծանելս զօր շաբաթուէ։ Ասեն
միաբան եթէ զկայսրն ոչ հայհոյէ արժա
նէ մահու թէ ոչ։ Ասէ պիղատոս թէ
արժանէ։ Ասեն քահանայքն ունիմք
վկայութի մեք ՚ի բազմաց, որ արգելոյր
զմարդիկք չտալ հարկս կայսերն․ զի ա-
սէր յինքենէ թէ ես եմ թագաւորել վր
մեր զկայսերն․ ասէ պիղատոս զկայսերն․
ասեն միաբան ապայ պարտէ դմա կեալ․
զի զանձն իւր հակառակ կացուցանէ
զկայսերն և ինքն թագաւորել․ արդ ահա
այսմ հետէ դորա հնազանդիմք, կայսերն
այլ ոչ․ իբրև ետես պիղատոս թէ ոչ ինչ
օգտի, առեալ հրամայեաց հրէիցն արտաքս
ելանել քան զապարանան կոչեաց զյս և

ասէ զինչ արարից քեզ: Ասէ յս՟, զամ՟
ինչ որ գրեալէ վս՟ իմ կատարեցի: Ասէ
պիղատոս, ոպ՟ գրեալէ վս՟ քո: Ասէ յս՟,
ամ՟ մարգարէքն որ վս՟ իմ խօսեցան վս՟
գալստեան իմոյ մահուան և յարութե՟ որ
լինելոցէ այդ ամ՟, ոչ անցանէ օրինաց
և մարգարէից մինչև ամ՟ կատարեցի:
Ասէ պիղատոս զինչ աւելի հայհոյութի՟
քան զայս մեծ որ մարդէ և զանձն իւր
հաւասար այ՟ կացուցանէ և հակառակ
կայսերն: Ասեն հրեայքն ով դատաւոր
մեք վս՟ այդ գործոյդ և բանիդ դատապար
տեմք զդա և ոչ բանի արդարութե՟ գնա
ցից որ հայր իւր զած՟ կոչէ. և հաւասար
զանձն այ՟ առնէ: Ասէ պիղատոս ցյս՟
այսպէս վկայեն վս՟ քո եթէ որդի այ՟ ես:
Ասէ յս՟ եթէ ոչ գործեմ զգործս հօր
իմոյ մի հաւատայք ինձ. և եթէ ինձ ոչ
հաւատայք սակայն գործոյն հաւատա
ցէք. ասէ պիղատոս այսխսկեն զարմանք
որ դու մարդես և զանձն քո ած՟ առնես:
Ասեն հրեայքն ով դատաւոր զայդ մեք
իսկ յառաջ լուեալեմք 'ի դմանէ և գի
տեմք որ մահապարտէ զի այդ բանդ հայ
հոյութի՟ է: Ասէ պիղատոս լուաես 'ի քա
ղաքիդ յայդմիկ եթէ առանց հրամանաց
իմոց

իմոց, ձեռն արկեալ յերեկօրեայ գիշերն
կալարուք զյս̃ կապանօք մինչև 'ի վաղ-
իւն տարաւ քահանայապետին կայիափայի
և բազում ազգի ազգի չարչարանօք ձե-
ռովք չարչարեցիք զնա. և ձեռով անձն-
իշխանութե̃ն կամօք արարիք զայն որ ինչ
կամեցաք, և ապա վաղորդեան աւուրբք
եկիք խաբէութբ̃ ձեռովք հաւանեցուցա-
նել զիս առեն հրէայքն ով դատաւոր ոչ
այդպէս զոր լուար մեք 'ի բազում ժա-
մանակից խորհուրդ արարեալ նմք վս̃ դորա
և ոչ կարացաք ըմբռնել զդա. և մինչ դեռ
ա̃մ բազմութ̃ն քաղաքիս ժողովեալ եաք
'ի միասին, ժամու պաշտաման աղօթից կա-
տարել զուխտ սրբութ̃ն տաճարին. տե-
սաք ամենեքեան միաբան յանկարծակի
մի ոմն աշակերտացն իւր եկն եկաց առա-
ջի մեր. և մեք ոչ իմացաք զխորհուրդ
նր̃. և ոչ ծանեաք եթէ զինչ խնդրեր, և
իբրև եկն և նստաւ 'ի մէջի մերում. եհարց
քահանայապետն կայիափայ վս̃ յն̃ և վս̃ վար-
դապետութ̃ն նր̃. և նա սկսաւ պատմել
մեզ թէ զա̃մ զոր ասէ և ուսուցանէ դժո-
ւարինէ ով կարէ ապրել. և մեք ոչ կա-
րացաք իմանալ զծածուկ խորհուրդ նր̃,
մինչև ինքնին յայտնապէս ասաց մեզ թէ



զինչ

զինչ կամիք տալ ինձ. և ես մատնեցից զնա 'ի ձեզ և մեք կշռեցաք արծաթ բազում և որ ինչ խնդրեաց արարաք զկամս նր. և նա խոստացաւ մեզ և առաց բազում ձեռս մահու եդեր 'ի վր նր. և դուք պատրաստ լերուք զգուշութբ և ես մատնեցից զնա 'ի ձեռս ձեր. և 'ի հասարակել գիշերոյն առեալ զմեզ աշակերտն իւր գնացաք 'ի տեղին որ էին աշակերտք նր ընդ նմա. և համբուրեաց զնա և ասէ բուռն հարեալ կալարուք զնա. և մեք առեալ զնա 'ի գիշերին և բերեալ զնա մուծաք խորան քահանայապետին կայիափայ. և պահապանս կացուցաք 'ի վր նր մինչև 'ի վաղիւն. և ըսպասեալ մնացաք կամաց քոց և արքունական հրամանաց: Այս է պիղատոս ուր է աշակերտն այն որ մատնեացն զնա: Ասեն քահանայքն զի որ ինչ խնդրեաց 'ի մէնջ արծաթ բազում հաճեցուցաք զկամս նր. և նա առեալ զարծաթն չոգաւ ընկեց 'ի տաճարն մծ բազմութեն ժողովոյն և գնացեալ անձամբ 'ի կոխ խեղդեա մահ եղեալ սատակեաւ: Իսկ պիղատոս իբրև լուաւ զայս հիացմամբ եղեալ զարմանայր, յայնժամ մծ բազմութեն քաղաքին սկսան աղաղա

կել

կել և ասել. ով դատաւոր լուր մեզ աղա
չեմք զքեզ բարձ 'ի մէնջ զնախատինս և
զհայհոյանս զի բազում անգամ Նախա
տեր զմեզ և յանդիմաներ յօրինաց և մար
գարէից անտի. զքահանայս և զերեցունս
զդպիրսն և զծերսն ժողովրդեանն: Ասէ
պեղատոս հաճեցուցից զկամս ձեր. ասա
ցէք ինձ որով մահուամբ կամիք սպանա
նել զդա ասեն հրեայքն յօրէնս մեր
գրեալ է թէ այր կամ կին մեղիցէ, ար
ժանի լիցի ձաղանաց քառաւոուն մի ով
պակաս գան արբցէ: Իսկ որ զա՛ծ հայ
հոյէ քարկոծելով քարկոծեսցին զնա:
Ասէ պեղատոս հաճեցուցիք. տարէք
զդա 'ի ձեզ և ըստ կամիք արարէք դմա:
Ասեն հրեայքն արժանէ 'ի խաչ հանել
զդա. և հայեցեալ դատաւորն զամբոխն
որ շուրջ զնովաւ կային և ետես զի բա
զումք լային 'ի նոցանէ: Ասէ պեղատոս
այնոսիկ որ շուրջ կային բազմութն քա
ղաքին, ոչ ամենեքեան կամին զմահ դորա:
Ասեն քահանայքն. սոքա այնքեն որ զկնի
նր շրջէին և աշակերտէին նմա, և նա
ձրի կերակրէր զամենեսեան առանց վաս
տակս և աշխատութե. յաղագս այնորիկ
լան: Իսկ ըստ բազմութե քաղաքիս զմահն
կամին

կամին և ոչ զկեանան ։ Ասէ պիղատոս վ̃ն
մեռանիցի յս̃ ։ Ասեն հրէայքն վս̃ հայհոյ
ութն և նախատանաց ազգիս և հակառակ
օրինացն և պատուիրանացն այ̃ որ ոչ է
հնազանդ ։ Իսկ նիկոդիմոս որ էր հրեա
հաւատարիմ և պաշտօնեայ յի̃ . յառն եկաց
առաջի պիղատոսի և ասէ . ով դատաւոր
լուր ինձ աղաչեմ զքեզ , հրամայեա ինձ
բան ինչ խօսիլ առաջի քո ։ Ասէ պիղա
տոս հրամայեա ։ Ասէ նիկոդիմոս ես ասա
ցի առաջի քահանայապետացն և այլ ժողո
վրդեան եթէ մի հակառակիք դմա զոր
ինչ գործէ . այլ քննեցէք զգիրս և զօրէնս
և զպատուիրանս մարգարէից . տեսէք
եթէ ամենեքեան վս̃ որոյ խօսեցան յա
ռաջագոյն և պատմեցին մեզ զի մեծ մար
գարէն մովսէս արար բազում նշանս և
արուեստս և սքանչելիս առաջի փարաւո
նի . և էին անդ երկու ծառայս փարաւո
նի յանէս և ամբրէս . և արարին նշանս և
արուեստս մեծամեծս հակառակ ընդ դէմ
մովսէսի . և ունէին զնոքա յեգիպտացիքն
հաւատար չդ̃ն իւրեանց և զնշանս զոր
արարին չէր այ̃ խափանեցաւ և կորեաւ .
և որք հաւատացին զնմ̃ նոյն ժամայն ան
հետ եղեալ պակասեցան ։ Եւ այժմ

Թոյլ տուք դմա առնել զոր ինչ գործեցէ
զի չէ արժանի մահու: Ասեն հրեայքն
դու աշակերտեալ ես նմա վն այնու բա
նից նր օգնես: Ասէ նիկոդիմոս. մի թէ
և իշխանս այլ աշակերտ նր լեալիցէ զոր
և զճշմարիտն խօսի. և կամ վայրաբար
կարգեալէ զդա կայսրն 'ի վր մեր յէմի և
աշխարհիս ձերում: Եւ հրեայքն կրճտ
էին զատամունս իւրեանց 'ի վր նիկոդի
մոսի, և սրտմտէին բարկութբ վր նր
մամռեալ չարութբ հայէին 'ի նա: Ասէ
պիղատոս զի կրճտէք զատամունս 'ի վր
նիկոդիմոսի զոր ճշմարիտն ասէ: Ասեն
հրեայքն ցնիկոդիմոս զճշմարտութի նր
դու առջիր մասն և բաժին քո ընդ նմա
եղիցի այժմ և յաւիտեան: Այր ոմն հրէա
յառաջ մատուցեալ աղաչէր զդատաւորն
և ասէր. ով դատաւոր բան ունիմ ինչ
ասել քեզ: Ասէ պիղատոս ասա: Ասէ
այրն. երեսուն ամ 'ի մահիճս անկեալ
կայի անդամալոյծ 'ի վիշտս ցաւոց չարա
չար, և 'ի գնալն յն բազում դիւահարք և
ախտաժէտք բժշկեցան և երիտասարդք
ողորմեցան ինձ. և բարձեալ տարան զիս
մահ ճօք իմով առաջի նր. և տեսեալ
յն գթացաւ 'ի վր իմ և ասաց բանիւ մի


այն

այն թէ առ զմահիճս քո եգնա. և ես
նոյն ժամայն յորժամ լուա զբանն բերա
նոյ նր. վաղվաղակի յարուցեալ առողջ
մարմնով կացի 'ի վր ոտից իմոց: Այսեն
հրէայքն յորում աւուր բժշկեաց զքեզ.
և նա ասէ թէ յաւուր շաբաթու: Այսեն
հրէայքն ով դատաւոր ոչ յառաջ իսկ
ատացաք.քեզ թէ 'ի շաբաթու առնէ զայս:
Այր ոմն մատուցեալ ասէ. ես կոյր էի
ծնեալ զբարբառ միայն լսէի և զերեսս
ումեք ոչ տեսանէի բնաւ և ընդ անցա
նելն յն աղաղակեցի զկնի նր և ասէի ողոր
մեաց ինձ որդի դաւթի. և նա եդ զձեռն
'ի վր աչաց իմոց բացան աչք իմ ահա
տեսանեմ զոր ես կամ: Այր ոմն յառաջ
մատուցեալ ասէ. ես կաղէի ոտիւք և
բնաւ ոչ կարէի ընթանալ. և 'ի նոյն ժա
մայն բանիւ միայն ուղղեաց զգնացս իմ:
Այր ոմն յառաջ մատուցեալ ասէ. ես
խուլէի և համր 'ի ծնէ բնաւ ոչ կարէի
լսել ինչ. և ոչ կարէի խօսիլ. և նոյն ժա
մայն ընդ ասել բանին միայն բժշկեաց
զիս: Այր ոմն իշխան յառաջ մատուցեալ
ասէ դուստր իմ վաղճանեցաւ և 'ի մա
հիճս եդեալ կայր. և սուգ մեծ և ողբա
ծն և լալումնէր 'ի տան իմում. և ես աղա

 չեցի

չեցի զնա և եկ 'ի տան իմում, և մինչ դեռ
բան 'ի բերանս նր էր․ առ ժամայն յա
րեաւ դուստրն իմ վաղվաղակի․ և ահա
ւասիկ տեսէք ամենեքեան առաջի ձեր
կայ կենդանի։ Մի ումն յառաջ մատու
ցեալ ասէ․ ես որդի ունէի միամօր և 'ի
մահիճն անկեալ վաղճանեցաւ․ և յն
գթացեալ յիս և ասէ մի լայր․ և որ բար
ձեալ տանէին զդագաղն զտեղի առին․
և յն ասաց պատանի դու քեզ ասեմ արի․
և առ ժամայն յարեաւ որդեակն իմ մար
մնով կենդանի․ և ահաւասիկ կայ առա
ջի ձեր։ Մի ումն յառաջ մատուցեալ
ասէ․ ես ութ և տասն ամէր որ 'ի բազում
ցաւոց հիւանդութեց կարկամեալէի այլ
և ոչ կարէի 'ի վեր հայել․ և նա առ ժա
մայն ուղղեաց և ահաւասիկ կամ առաջի
ձեր։ Ասեն հրէայքն ասա մեզ թէ յո
րում աւուր բժշկեաց զքեզ․ և նա ասէ
յաւուր շաբաթու։ Ասեն հրէայքն տե
սանես դատաւոր մր յառաջագոյն ասա
ցաք թէ 'ի շաբաթու առնէ զբժշկութի։
Մի ումն յառաջ մատուցեալ ասէ ես տե
ւանեալ էի երկոտասան ամս և ոչ էի բժշ
կեալ 'ի ցաւոցս անտի և 'ի մերձենալն
'ի քղանցս հանդերձի նր․ նոյն ժամայն



եկաց

եկաց բղխումն արեան իմոյ. ասեն հրէ
այքն մեք յօրէնս ունիմք կնոջ մարդոյ
ոչ գալ 'ի վկայութիւն: Այլ ոմանք արանց
և կանանց սկսան աղաղակել և ասել մեք
նեղեալ էաք 'ի բազում վշտաց և այսոց
չարեաց և դա բանիւ միայն հալածեաց
զամենայն լեգէոն զօրացն դիւաց և զմեզ փրկ
եաց 'ի բռնութենէ թշնամոյն: Ասեն քա
հանայքն ցպիղատոս ոչ յառաջ ասացաք
քեզ թէ կախարդէ և իշխանութեամբ դի
ւաց հանէ զդևս: Այր ոմն յառաջ
մատուցեալ ասէ. լուր ինձ ով դատաւոր
որ ականատես եղեալ եմ. որ զղազարոս
զչորեքօրեայ մեռեալն և նեխեալն և հո
տեալն յարոյց զնա 'ի մեռելոց անապա
կան մարմնով և կացոյց զնա կենդանի:
Իբրև լուաւ զայս պիղատոս 'ի դողումն
եղեալ զարհուրեալ ասէր՝ ընդէր՝ կամիք
հեղուլ զարիւն առն արդարոյն այնմիկ:
Յայնժամ հրամայեաց պիղատոս ժողո
վրդեանն յարտաքս ելանել, և կոչեաց
դաղտ զնիկոդիմոս և զայն երկոտասան
արքն որ վկայէին զյիսուս է թէ չէ ծնեալ
'ի պոռնկութենէ. և ասէ ցնոսա զինչ կամիք
զի առարից զյիսուս անուանեալն քրիստոս: Եւ
ասէ նիկոդիմոս և արքն այնմիկ դու ես


դատա

դատաւոր ելն և իշխան ժողովրդեանն
յայսմիկ, և 'ի ձեռն քո է ամ̃ ինչ սպա
նանել և կեցուցանել: Իսկ պիղատոս տե
սանէք զի ահա խռովութի̃ լինի ժողովր
դեանն, և երկնչիմ յոյժ 'ի բազմութէ̃ ժո
ղովրդն և խառնիճաղանճ ազգէս 'ի վր̃ եղե
լոցս. զի ոչ կարեմ հեղուլ զարիւն ար
դար 'ի տարապարտուց. ասէ նիկոդիմոս
հրամայեայ ինձ խօսել առաջի քո. և նա
ասէ երդուեալեմ 'ի զօրութի̃ չա̃ծոյն և
'ի գլուխ կայսերն թէ զոր զինչ հրամայ
ես ինձ և ես զայն արարից: Ասէ նիկո
դիմոս թէ կամք լիցի տէրութեդ հրա
մայեայ զյս̃ պահել զգուշութբ̃ մինչև 'ի
վաղիւն, և հրամայեայ ժողովրդեանն
սպառնալեօք մեծաւ երթալ իւրաքանչիւր
ոք 'ի տուն իւրեանց: Ասէ պիղատոս ոչ̃
կարացից առնել բանդ զայդորքին՝ զի ահա
ամբոխն շուրջ զմիօք պատեալ կան:
Յայնժամ յարուցեալ պիղատոս լի եղև
բարկութբ̃ մեծաւ, և հրամայեաց ժողո
վրդեանն արտաքս ելանել և գնալ իւրա
քանչիւր 'ի տունս իւրեանց մինչև 'ի վա
ղիւն: Ասեն քահանայապետքն ցպիղատոս
երկու ինչ ընտրեալ կայ առաջի քո՝ եթէ
զմիաբանութի̃ աշխարհիս և բնակութե
մերոյ

մերոյ կամիս. հրամայեայ բառնալ զդա
'ի մէնջ. և թէ կամիս կալ դորա աշխար
հիս մերում, հրամայեա ամենեցունցն
երթալ իւրաքանչիւրոք ուր և կամիցին.
և առ այս բանի դու տաս պատասխանի
կայսերն: Իբրև լուաւ զայս պետրոս
զարհուրեցաւ և երկեաւ յոյժ. կոչեաց
զամ բազմութի ժողովոյն հրէիցն և ասէ
գիտեմ որ սովորութի է ձեզ 'ի տօնի
աստ արձակել զմիոք 'ի կապելոյս. արդ
ունիմ զոմն 'ի բանտի արկեալ կապանօք
որում անուննէ բարաբաս. և յն որ առա
ջի ձեր. արդ զորն կամիք երկուցունցս
աստի զի արձակեցից ձեզ. զեսու բարա
բայն եթէ յս անուանեալն քս. ասեն
միաբան ոչ զդա այլ զբարաբայն. ասէ
պիղատոս իսկ զյս զինչ արարից զանուա
նեալն քս. ասեն ամենեքեան խաչեսցի:
Եւ այլք այլ իմն աղաղակէին և ասէին.
չես բարեկամ կայսերն. զի ասաց ինքն
թէ թագաւորեմ հրէից, և զանձնէ թէ
որդի եմ այ և 'ի յերկնից իջի: Իսկ պի
ղատոս յոյժ բարկացեալ ասէ դուք հա
կառակ և դիմա դարձէք բարերաց ձե
րոց, լուեալեմ 'ի յօրինաց ձերոց թէ ած
որ եհան զձեզ 'ի ծառայութէ փարաւո


նի

նի եւ քառասուն ամ պահեաց զձեզ՚ի յա
նապատին, եւ բազում բարութ̃ի պարգե
եաց ազգին ձերոյ, եւ փոխանակ այմ̃
ամ̃ի բարկացուցիք զտ̃ր ա̃ծն ձեր. եւ փո
խանակ արարչին ձերոյ կռոց երկիրպա
գիք դուք, եւ կամեցաւ սատակել զձեզ.
եթէ ոչ մովսէս աղաղակէր վ̃ն ձեր, ամե
նեքեանդ կորնչելոցէիք: Իբրեւ լուան
ամենեքեան բանս զայս ամօթ եղեալ
լռեցին: Իսկ պիղատոս յարեաւ ատենէն
անտի եւ կամեցաւ արտաքս ելանել. աղա
ղակ բարձին ամենեքեան եւ ասեն՝ մեք թա
գաւոր զկայսերն գիտեմք եւ ոչ զյ̃ս. քան
զի մոգն յարեւելից պատարագ բերին դմա
՚ի յընծայումն ոպ̃ թագաւորի. եւ խնդրէր
հերովդէս սպանանել զդա. հայրն եւ մայրն
առեալ փախստական գնացին ՚ի յեգիպտոս
Ասէ պիղատոս զդա խնդրէր հերովդէս,
ասեն հրէայքն այո՛ զդա. եւ պիղատոս
զահի հարեալ լռեցոյց զանբոխն եւ ասէր.
դա էր որ ասէին թէ ծնաւ նոր արքա
ազգէն իղ̃ի. եւ ՚ի բէթղեհէմ հրեաստանի:
Ասեն հրէայքն այո՛ դա է: Ասեն պիղա
տոս եթէ այդ այդպէսէ զթագաւորն
զարքայն իղ̃ի ով կարէ դատապարտել:
Իբրեւ լուան զայս բազմութ̃ի ժողովոյն



սկսան

սկսան աղաղակել և ասել․ Թէ զդա կա
միս թագաւորել ՚ի վ՜ր մեր չես բարեկամ
կայսեր մեք ամենեքեանս ՚ի կայսերն բո
ղոքեմք։ Իսկ պիղատոս առեալ ջուր և
լուաց զձեռն իւր առաջի ժողովրդեանն
և ասէ․ քաւեալեմես յարենէ արդարոյդ
այդմիկ դուք գիտէք ես անպարտեմ ա-
րեան դորա։ Ասեն հրէայքն արիւն դորա
՚ի վ՜ր մեր և ՚ի վ՜ր որդւոց մերոց եղիցի։
Յայնժամ հրամայեաց պիղատոս վարա
գուր արկանել առաջի ատենին որ նստ
էին և վճիռ մահու եհատ ՚ի վ՜ր յ՜ն և ասէ․
յայժմէ հրամանն ՚ի դատաւոր պոնտացւոյ
պիղատոս է որ իշխանութ՜բ հակառակ
կացցեն տէրութ՜ե կայսերն արքունուստ
պատժեալ դատեսցի․ նախ հրամայեմ
զքեզ հարկանել գաւազանաւ ըստօրինի
բարէպաշտ թագաւորաց․ և յետ այնորիկ
հրամայեմ հանել զքեզ ՚ի խաչ․ յայնժամ
պիղատոս գան հարեալ զյ՜ս ետ ՚ի ձեռս
նց զի ՚ի խաչ ելանիցէ։ Եւ տես զայս զի
երեկոյին ըմբռնեցին զյ՜ս մինչև ցերրորդ
ժամու աւուրն ոչ ետուն նմա հագիստ
քթթել ականմի․ այլ այն քան չարչարա
նօք զգիշերն բոլոր շրջեցուցին մինչ
զի վճիռ ետուն հատանել զի խաչեսցի։



Եւ

Եւ յորժամ ել հրաման խաչելոյ մու-
ծին զյս՛ զինուորքն 'ի ներքս գաւիթն
ուր հրապարակներ • և կոչէին միայն գա-
մայն զո՛մ գունդոն և զգեցուցին նմա
քղամիտ կարմիր և ծիրանի • և եդին 'ի
գլուխ նո՛ պսակ արարեալ 'ի փշոյ և եղէգն
աջս ձեռին նո՛ • 'ի ծունր իջեալ առաջի
նո՛ կատակէին և ասէին ողջ լեր Թագա-
ւոր հրէից • և Թքանէին 'ի նա • առնէին
զեղէգն և ծեծէին զգլուխն ։ Եւ իբրև
հանին արտաքս ունէր պսակ 'ի փշոյ և
հանդերձ ծիրանիս և յորժամ ձախեցին
զնա • մերկացուցին զքղամիտն 'ի նմանէ
և ագուցին նմա զիւր հանդերձն • և տա-
րան զնա 'ի խաչ հանել ։ Արդ այսօր ա՛մե
ոչէր տեղեակ մայրն յս՛ ածածինն մարիամ •
այլ աղօթէր 'ի տան իւրում և աշակերտքն
'ի փախուստ կային • և ասէին ցմիմեանս
թէ պարտէ գնալ և պատմել մօր ա՛ն մե-
րոյ բայց ով երթիցէ և տացէ գուժ • կա-
րէին ասել առ. գաբրիել դու գնա • և
նա ոչ էառ յանձն • և տեսեալ զկանայս
որ ծանօթէին կուսին մարիամայ և ասեն
ցնս՛ ով մարիամանք և սիրելիք կուսին
դուք ծանուցէք մօր ա՛ն մերոյ զմահ
որդոյն իւրոյ 'ի ձեռն անօրէն հրէից ։



Ապա

Ապա գնացին կանայքն առ կոյսն Ծ̅ը և
նստան տրտում երեսօք և ոչ կարէին
պատմել նմա. զի գիտէին զգութ սիրոյ
նր̅ զի գուցցէ 'ի տրտմութե̅ մեռցի այլ
միմեանց հայելով լռէին։ Եւ ասէն ցյով
հաննէս աւետարիչն դու երթ և ծանոյ
նմա. զի կանայք կակղասիրտքն են և ոչ
կարեն ասել։ Եւ երթեալ հարցանէր
յովհաննէս ցմայր տ̅ն և ասէր. ով սրբու
հի ա̅ծածին ուր է որդին քո. ուր է
ուրախութի̅ն քո. ուր է ճառագայթն քո։
Ո՞ւր է փառք և պսակն քո։ Ո՞ւր է միա
ծին և անդրանիկն քո։ Ո՞ւր է տ̅ր և վար
դապետն մեր։ Ահա մայր տ̅ն իմոյ ըմբռ
նեցին զնա հրէայքն և տանին 'ի մահ
խաչին. և ասէն յոհաննու հրէայքն ան
ցուցանէին զյս̅ առ դրանն մարիամու.
և ոմանք աղաղակէին և ասէին. ով մար
դիկք որք կամիք տեսանել զմահ սուտ
մարգարէին յն̅ եկայք և տեսէք։ Եւ յոր
ժամ լուաւ զայս ս̅բ կոյսն թնդաց սիր
տըն վերացաւ ուշն. աղմկեցաւ միտքն
և թռաւ 'ի դուրս իբրև զնետ. ցոլացաւ
իբրև զկայծակն. արգացաւ ոտ̅ զնշոյլ
արեգական. սլացաւ ոտ̅ զարծուի. և եհաս
առ միածին և որդին իւր. և ետես որ

զինորքն պատեալէին զինա. և 'ի մէջ առ
եալ զորդին իւր սուսերօք և բրօք վար
էին 'ի մահ խաչին. մերկ և բոկիկ. գլուխ
բաց և հեր արձակ. ձեռն 'ի յետս կապ
եալ. և խաչափայտն 'ի յուսին. իբրև ե-
տես մարիամ գոռաց իբրև ամպ. գոչեաց
իբրև զառիւծ 'ի վր կորիւն առիւծու.
մռնչեաց իբրև զղինձ. խռովեցաւ ոպ
զծով. պղտորեցաւ իբրև զգետ գարնան.
գալարեցաւ աղիք նր ոպ զմագաղաթ
կսկծեցաւ սիրտ նր ոպ հրոյ այրեցեալ.
ցաւեցաւ լերդ նր ոպ 'ի նետս հարեալ.
մթնեցաւ իբրև զմէգ. խաւարեցաւ իբրև
զմթան գիշերոյ խաւարեալ ուշագնաց
եղև իբրև զթալկացեալ. և անկաւ երկիր
իբրև զմեռեալ և ոչ կարէր խօսիլ. ով մա
րիամանք փութով օգնեցէք մօր տն իմոյ.
փութով եկին և յարուցին զնա. հայեցեալ
տեսանէր զմիածին որդին իւր յայնպիսի
նախատանս. լայր և ողբայր դառնապէս.
և արիւնախառն արտասուս հեղանէր 'ի յա
չացն աղաղակէր և հարկանէր զերեսն.
ձողէր զհերսն. պատառէր զհանդերձսն.
սուգ և կոծ առնէր 'ի վր որդոյն իւրոյ
և ասէր. Ով սիրելի որդեակ իմ ընդ այս
պիսի տեսանեմ զքեզ. Ով ցնծութի իմ

տղ̃ ըմբռնեցար։ Ով խնդութիւն իմ տղ̃
մատնեցար։ Ով կեանք իմ տղ̃ մահացար։
Ով սիրելի իմ զի արդ պսակեցար փշոք.
զինչ արարից՝ և կամ զինչ գործեցից. զինչ
առնէ գերի մայրս քո. առ ով երթայցեմ.
զով 'ի յօգնութիւն կոչիցեմ. ով որդեակ
իմ այսու հետև վայ է ինձ և եղուկ։ Իսկ
անօրէն հրէայքն շրջեցուցանէին զյս̃
ընդ ամ̃ յեւէմ և մայրն յի̃ զհետ երթալով.
և էին անդ կանայք բազում. և այնպէս
հեծութբ̃ լայի̃ն 'ի սիրտս իւրեանց. այլ
և կանայք խաչողացն հող արկանէին 'ի
վր̃ նր̃։ Իսկ մայրն յի̃ երթայր և անկա
նէր. և կանայք յարուցանէին զնա. և յն̃
բարձեալ զխաչայփայտն և ոչ կարէր տա
նել զի ծանրէր։ Եւ ապա կալան զպա
հակ սիմոն կիւրենացին զհայր աղեքսանդ
րի և ռուփփայ զի բարձցէ զխաչափայտն
յի̃։ Եւ ասեն մարիամանքն լալով. ով
տխրամայր վն̃ էր կամիս գնալ 'ի գողգո
թայ զի չէ մեզ բաւական. զի հայրն
մեր կորուսաք զի զքեզ մի ևս կորուսցուք
դարձիր գնասք 'ի տուն քո իսկ նա ոչ
լուաւ նց̃ և բազում աշխատանօք եհաս
'ի գողգոթայ. և ասէ թողլ տուք ինձ զի
մեռայց ընդ որդւոյ իմոյ՝ ոչ ևս պիտոյ է

այսուհետեւ ինձ կեանք։ Յայնժամ
եդին զխաչն 'ի գետնի եւ զյս՟ մերկացու-
ցին. եւ տագնապ յոյժ՝ զի շապիկքն ծա-
լեալ էր ընդ մարմնոյն. եւ վս՟ յոյժ նախա-
տանաց զի ամենեւին երբ եւ զմերկ 'ի մօրէ
մերկացուցին։ Իսկ ո՟ր կոյսն 'ի մօտն եկ
եւ առեալ զգլխոյ իւրոյ զմանտիլն եւ արկ
զանդամօքն յն. յայնժամ կանգնեցուցին
զյս՟ քարշելով յերկուց կողմանց մինչեւ
հասուցին 'ի տեղին բեւեռացն մինչեւ լու-
ծան օդուածքն 'ի մարմնոյն յն. եւ ա՟յ
ասէ դաւիթ. Թուեցին զամ՟ ոսկերս իմ.
եւ վս՟ չար նախատանաց նախանձու հաստ
եգոյլ բեւեռօք բեւեռեցին զոտսն եւ զձեռսն
կռանաւ ամրացուցին զյս՟ եւ ապ՟ 'ի վե՟ր խաչին
բեւեռ հարկանելով. եւ ապա կանգնեցու-
ցին զխաչն եւ զյս՟ 'ի վե՟ր նր՟ զի ամենեքեան
տեսցեն. եւ կռանաւ ամրացուցին 'ի գլուխ
նր՟ զփուշ պսակն եւ արիւն յոյժ հոսա-
ոտիցն եւ ձեռացն մինչեւ ներքեւայ եղեւ խա-
չափայտն. եւ մայր տն՟ կայր խորովեալ
սրտիւ առաջին նր՟. եւ այնչափ արտասա-
ւեաց որ իբրեւ զառու հոսէր աչացն. եւ
ասէր ով ո՟ր ա՟ծածին ընդէր այդ չափ լաս.
եւ նա ասէ ունիմ պատճառ լալոյ զի արդ
ոչ լացից. զի տեսանեմ որդին իմ 'ի չար

 չարանս

չարանս և ոչ կարեմ օգնել տեսանեմ ծա
րաւի և ոչ կարեմ արբուցանել զջուր.
վայ և եղուկ ողորմելի մօրս՝ զինչ արա
րից. զի աւաղ որդեակն իմ թէ ծարաւի
եմ և լեղի արբուցանեն. երկնչիմ երթալ
բերել ջուրս. գուցէ եկեալ մեռեալ
գտանիցեմ. և աղաղակէր առ երկնայինսն
ա՟մ ողորմեցարուք ողորմեցարուք զի դէպ
վշտաց հանդիպեցայ և ոչ գիտեմ զինչ
արարից և կամ զինչ գործեցից: Եւ տեսե
ալ զգաբրիէլն աղաղակեաց ասելով 'ի նա.
ով գաբրիէլ ուր է աւետիսն այն որ ե-
տուր ինձ: Ո՞ւր է ուրախութի՟ն այն:
Ո՞ւր է ողջոյնն այն. որ այսօր 'ի տրտ
մութի՟ն փոխեցաւ. զի ասացեր ինձ ող
ջոյն ընդ քեզ մարիամ. վայ ինձ զի ոչ է
անուն իմ մարիամ այլ խաւար: Ասացեր
լի շնորհօք՝ այսօր լի եմ դառնութ՟բ:
Ասացեր տ՟ր ընդ քեզ՝ այժմ առին զտ՟րն
իմ յինէն: Ասացեր ուրախ լեր՝ այսօր լի
եմ տրտմութ՟բ: Ասացեր օրհնեալ ես դու
'ի կանայս՝ այսօր նախատինքեմ 'ի մէջ կին
եկ և տես զպտուղ իմ թէ ո՟պ թափեցաւ.
ո՟պ ցամաքեցաւ. կամ ո՟պ ձմլեցաւ 'ի մէ՟
խաչին. զայս ասելով գիրկս արկանէր 'ի
խաչին հոգւոց հանէր 'ի խորոց սրտէ հա

ուշէր զերեսն 'ի վր՜ մոխրոյն Թաւալե
ցուցանէր. ան յագաբար համբուրէր. և
'ի կսկծոյն մորմոքէր. որդին արեամբ
զփայտն ներկէր. և մայրն արտասուօք
առոգանէր. հայր հոգւոյն ակն արկէր.
և մայրն Թե արկանէր հոգին 'ի չարչա
րանս էակցին գիտէր. և մայրն նորին 'ի
մահ փարանէր և 'ի կսկծոյն յոյժ գին մոր
մոքէր ասելով. վայ և եղուկ եղկելոյս
ասէր. ո՜վ ասէ եսայի տեսաք մեք զնա
և ոչ գոյր նր՜ տեսիլ և ոչ գեղեցկութի
այլ տեսիլ նր՜ անարգ և նուազեալ քան
զա՜մ որդւոց մարդկան։ Եւ դարձեալ
ասէր մեծաձայն ցհրեայսն և զիս ընդ
որդւոյ իմոյ սպանեցէք, ով անօրէնք և
չարք զի ընդ նմա մեռանիլ իմ ինձ քաղց
րէ, քան Թէ լիցեմ յետ սորա կենդանի
զի առանց որդւոյ իմոյ կեանքս իմ մահէ.
հանգիստն իմ չարչարանք է. ո՜վ ողբայր
դաւիԹ 'ի վր՜ որդւոյ իւրոյ աբիսողոմայ
և ասէր. ով տայր ինձ քո զմահ որդոյն
իմոյ. նոյնպէս և ա՜ծ կոյսն ասէր. ով որդ
եակ իմ. այլոց ողորմիս ընդխսէր ոչ ողոր
միս զի ընդ քեզ մեռայց. զաւազակն միսի
Թարեւս ասելով այսօր ընդ իս լիցես 'ի
դրախտին. և զիս ընդէր Թողուս 'ի մէջ
դայլոց.

դայլոց. զհոգին 'ի դժոխոց կամիս ազա
տել. և զիս ընդէր Թողուս 'ի գերուԹի
'ի ձեռն չար և անօրէն հրէից. խաչանո
ղացն աղօԹես և մայր քո ընդէր ոչ ափ
սոսաս և ողորմիս: Իսկ յս̃ ասէ մի լայր
քաղցրիկ մայր իմ. զի ցաւ քո առաւել
դժուարինէ ինձ քան զհեղումն արեան
իմոյ. բախումն կրծից քոց ծանրէ ինձ
քան զհարումն բևեռաց իմոց. կսկիծ
սրտի իմոյ առաւելէ. մի լայր մայրիամ
և յաւելուր զցաւ միածնի քո. այլ դԹայ
'ի յաղիս քո որ առանց սերման յղացար
և կուսուԹբ̃ ծնար: Ահա աւանդեմ քեզ փո
խանակ իմոյ զյոհաննէս 'ի միխիԹարու
Թի քեզ. դու եղիցիս դորա մայր և նա
եղիցի քեզ որդի: Ասէ տր̃ կոյսն մի ասեր
զայդ միածին որդի իմ աղաչեմ զքեզ.
քան զի ոչ առնում յանձն իմ զի ոչ կա
րեմ փոխարկել զած̃ն ընդ մարդոյ. զա
րարիչն ընդ արարածոյ. զվարդապետն
ընդ աշակերտին: Եւ եր ժամ երրորդի
յորժամ 'ի խաչ հանին զյս̃ և երկու աւա
զակ ընդ աջմէ և ընդ ահեկէ զդեսմաս
ընդ աջմէ և զգեստաս ընդ ահեկէ. յայն
ժամ սկսաւ զգեստաս որ ընդ ահեկէնէր.
հայհոյել զյս̃ և ասել եԹէ որդի այ̃ եր


սա

սա ընդէր ոչ ապրեցուցանէր զինքն և
զմեզ այլ փրկէր . պատասխանի ետ ըն
կերն որ ընդ աջմէնէր և ասէր սաստելով
՚ի նա չերկնչիս դու ա՟յ որ այսպէս ասես.
զի մեք արժանի եմք և իրաւի պատժիմք
և ըստ գործոց մերոց առնումք զհատու
ցումն . և սա ամպարտ ինչ ոչ գործեաց.
և ասէ ցյ՟ս տ՟ր յիշեա զիս յորժամ գաս
արքայութ՟բ քով . և յ՟ս ասէ այսօր ընդ իս
իցես ՚ի դրախտին : այնժամ խաւար կա
լաւ զերկիր ՚ի վեցերրորդ ժամէն մինչև
ցիննն ժամն , և սկսաւ յ՟ս առ հայր գոչէր
և ասէր էլի էլի լամասաբաքթանի . այս
ինքն հայր ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգե
իմ . և վ՟ս սպանանողացն աղօթէր : Եւ կա
մէր յետին ողջոյն տալ մօրն և ոչ կարէր
խօսել . և ձայն բարձր աղաղակեաց և ար
ձակեաց զհոգին յայնժամ արեգակն խա
ւարեցաւ և լուսին արիւն դարձաւ , վէմք
պատառեցան . երկիր շարժեցաւ և գե
րեզմանք բացան . վարագոյր տաճարին
ցելաւ . և ահա տ՟ն արարածք սկսան սուգ
առնուլ ՚ի վ՟ս որդոյն ա՟յ : Յայնժամ եկին
հրէայքն խորտակել զբարձս ն՟ց և մի ոմն
զինուորացն տիգաւ խոցեալ զկող ն՟ր և
հեղաւ արիւն և ջուր . յորժամ ետես


զինվորն

զենւորն սկսաւ աղաղակել և ասել. որ
դար և որդի ա՟յ է սա. և տ՟մ. ժողովուրդն
որ եկեալ էին անդ տեսանել զկատարածն
բախէին զկուրծս իւրեանց և լային դառ
նապէս և աւաղէին զյս՟: Եւ իբրև երեկո
եղև. քան զի ուրբաթ եղև. և ահա այր
մի որում անուն էր յովսէփ արեմաթա
ցի որ էր արդար և ճշմարիտ հաւատա
ցեալ ՚ի տ՟ր. սա մտուցեալ առ պիղա
տոս խնդրեաց զմարմինն յի. և պիղատոս
եհարց զնա և ասէ թէ արդար և այնչափ
վաղ մեռաւ. և իբրև ըստուգեաց զբանն
՚ի հարիւրապետէն շնորհեաց զմարմինն
յի առ յովսեփայ. և յովսէփ գնեաց կտաւ
և ՚ի ջուցեալ ՚ի փայտէն յովսէփ և նիկոդի
մոս պատեցին կտաւօք և խնկօք զմարմինն
յի. ո՟ր օրէնն էր հրեից պատել. և դառ
նագոյն կսկիծս առնէր և կոծ մեծ մայրն
յի ՚ի վ՟ր միածնի իւրոյ և սլացուցանէր
զն՟ս և ասէր սիմէոնի ասացեալն թէ ընդ
անձն քո անցցէ սուր. և եդին ՚ի նոր
գերեզմանի. և գնաց յովսէփ թագուցեալ
՚ի յահէն հրէից. և իբրև լուան հրէայքն
թէ յովսէփ և նիկոդիմոս առեալ զմար
մին ն՟ր թաղեցին ՚ի գերեզմանի. խնդ
րէին զյովսէփ և զնիկոդիմոս սպանանել



զն՟ս.

՚ի փառաբանութ՟ի ամենամ՟բ երրորդութ՟են,
հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն:



## Պատմութիւն սրբոյն ղունկիանոսի հարիւրապետին։

Սա էր 'ի կապադովկացւոց գաւառէն. և էր կարգեալ հարիւրապետ 'ի գունդս հռոմայեցւոց։ Եւ առաքեցաւ 'ի կայսերէն՝ տիբերեայ. պիղատոս դատաւորին եճմի։ Եւ յաւուր խաչելութեանն ք͞ի, ետես զահագին շարժումն երկրի։ Զխաւարումն արեգականն. և զայլ սքանչելիսն որ եղեն 'ի ժամ խաչին։ Որ և վէմք պատառեցան. և գերեզմանք բացան։ Իբրև զայն ե͞տ ետես ղունկիանոս. աղաղակեաց մ͞ծ ձ͞յն և ասաց. թէ արդար և որդի ա͞յ է սա։ Եւ յորժամ հրէայքն. ետուն կաշառս՝ զինուորացն. զի թագուցեն զյարութիւն ք͞ի։ Ղունկիանոս ոչ կամեցաւ առնուլ յարծաթոյն. և ոչ այլ. ͞բ. զօրականքն՝ որք հաւատացին ընդ նմա. և այնուհետև թողին զզօրականութիւն իւրեանց և յարեցան յաշակերտսն ք͞ի։ Եւ յետ ս͞բ հոգւոյն գալստեանն. մկրտեցան 'ի ս͞բ առաքելոցն։ Եւ հրամանաւ պետրոսի առաքելոյն գնաց ղունկիանոս՝ 'ի բնիկ գաւառն իւր 'ի կապադովկիա. և անդ՝ քարոզէր զ͞քս։ Եւ լուեալ հրէիցն որ յեճմ. գրգռեցին զպիղատոս

ըսպանանել զղունկիանոս: Եւ նա գրեաց
թուղթ և առաքեաց 'ի հռոմ առ կայսերն
տիբերիոս՝ և ծանոյց նմա զքրիստոնեա լի
նելն ղունկիանոսի: Եւ տիբերիոս առա
քեաց զօրական մի 'ի կապադովկիայ. զի
ըսպանցէ զղունկիանոս: Եւ եկեալ զօրա
գլուխն. և եգիտ զղունկիանոս՝ և զերկու
զօրականսն ընդ նմա յագարակի ժառան
գութեն իւրոյ՝ որ կոչէր սադրալէս, և ա-
սաց նց ողոքանօք և ըսպառնալեօք ուրա
նալ զՔս: Եւ նա արիաբար ընդ դէմ
կայր բանից նց և ասէր: Որ լուսաւո
րեաց զիս հոգւով և մարմնով. նա է ած
ամի: Ասէ զօրապետն. զի արդ լուսաւո
րեաց զքեզ: Ասէ ղունկիանոս. ես կոյրէի
միով ակամբս: Եւ 'ի ժամ խաչելութեն
Քի. ես հրամանաւ պիղատոսի 'ի վր կայի:
Եւ 'ի խոցելն զնա պատառեցաւ կողն. և
ել անտի արիւն և ջուր. վկայ անմահ
ածութեն նր. և կենդանի մեռելութեն նր:
Ուստի ցայթեաց կաթ մի 'ի կենդանարար
յարենէ կողին Քի, 'ի խաւարեալ աչս իմ.
և լուսաւորեաց զիս: Ընդ նմին եբաց և
զաչս հոգւոյս իմոյ տեսանել զլոյս ած գի
տութեն իւրոյ: Իսկ զօրապետն այպան
եաց զառացեալսն և բանադատէր զնա ու


րանալ

բանալ զՔս։ Եւ յոչ հաւանելն ղուն
կիանոսի, եւ խստագոյն չարչարել զնա։
Եւ եղև զի բանիւ սրբոյն խաւարեցան
աչք զօրապետին. և աղաչէր զղունկիա
նոս լուսաւորել զնա։ Ասաց ղունկիանոս
եթէ զիս ոչ ըսպանանես աչք քո ոչ լու
սաւորին։ Յայնժամ հրամայեաց զօրա
պետն գլխատել զնա և զ.Ժ. ընկերս նր։
Եւ իսկոյն բացան աչք զօրապետին՝ և
առեալ զգլուխ ղունկիանոսի. և տարա
ւ առ պիղատոս յեւէմ։ Եւ նա էառ զխոս
տացեալ կաշառսն 'ի հրէիցն՝ և ետ 'ի նմ
զնք զգլուխն ղունկիանոսի։ Եւ նք առ
եալ թաղեցին յաղբակոյտս քաղաքին։
Եւ ընդ յաւուրսն ընդ այնոսիկ. կինմի
այրի կապադովկացի՝ հաւատով քրիստո
նեա. աչացաւ լեալ. և խաւարեցաւ լոյս
աչաց նր. և ունէր որդի միամօր. զոր առ
և գնաց յեւէմ զի թերևս 'ի հողոտեղեացն
ցանեսցէ յաչսն իւր՝ և տեսցէ զլոյս։ Եւ
'ի հասանելն յեւէմ. հիւանդացաւ միամօր
որդի նր և մեռաւ. որ եղև կրկին խաւա
րումն այրի կնոջն այնմիկ։ Եւ 'ի բազում
լալոյն և 'ի կոծոյն՝ անկեալ կայր հեծեծա
նօք. և դառն կենօք. ողորմելի խաւար
եալ աչօք։ Եւ 'ի տեսլեան երազոյ՝ եր


ևեցաւ

և եցոյց նմա ս̃բն ղունկիանոս․ և ծանոյց
նմա զա̃մ եղեալսն․ 'ի հրէիցն և 'ի պիղա
տոսէ առ նա։ Եւ թէ ո̃պ մարտիրոսա
ցաւ։ Եցոյց նմա և զտեղին՝ ուր թաղեալ
կայր գլուխ ն̃ր։ Եւ ասաց թէ փորեա
և հան զգլուխ իմ․ և առ ժամայն տես
ցեն աչք քո զլոյս։ Ցուցէց և զորդին
քո փառօք։ Եւ յարուցեալ գնաց կինն
'ի տեղին՝ այլոց առաջնորդութ̃բ․ և փո
րեալ զտեղին ձեռօք իւրովք․ եգիտ
զգլուխ սրբոյն․ և ընդ հանելն յաղբոյն՝
առնեալ 'ի ձեռն իւր․ և նոյն ժամայն
բացան աչք ն̃ր․ և ետես զլոյս։ Եւ պա
տեալ ս̃բ կտաւօք՝ և առեալ տարաւ յաշ
խարհն իւր 'ի կապադովկիայ։ Նոյնպէս
և զմարմին որդւոյ իւրոյ տարաւ ընդ
իւր։ Եւ տարեալ 'ի գիւղն սադրալիս՝
և եդ 'ի մուտս տապանի զորդին իւր․ ընդ
սրբոյ գլխոյն․ ո̃պ և հրամայեաց նմա
ս̃բն։ Եւ դարձեալ ետես զս̃բն ղուն
կիանոս՝ և մերձ նմա զորդին իւր փա
ռօք․ և լուսապայծառ տեսլեամբ։ Որ
ասէր ցնա տեսանես զիս մայր իմ․ թէ
ո̃պ 'ի ձեռն ղունկիանոսի փառաւորեաց
զիս ա̃ծ։ Եւ յանձն արար սմա և հանա
պազ եմ ընդ սմա 'ի փառս ք̃ի ա̃յ մերոյ։



Պատ

Պատմութիւն ՌՁ. քահանայի հայրենեաւ եպիսկոպոսն
ճդ.

Քահանայ մի աղեքսանդրացի. գնաց յանապատն առ եպիսկոպոսն որ նստէր լռութե̅ն յանապատի. և ասէ ցնա քահանայն։

Հայր սբ կամիմ կրօնաւորել ասա յանապատիս՝ և ունիմ կին և որդիս։

Ասէ եպիսկոպոսն՝ փոխանակ արբութե̅ն. կամիս մեղանչել որդեակ. զի արդ՝ թողուս զկին և զորդիս։

Ասէ քահանայն՝ զի արդ զայլս ուսուցանես. և զանձդ քո ոչ ուսուցանես։ Դու ընդէր թողեր այրի զեկեղեցին սբ. և որբ զժողովուրդն ա̃յ. և զիս խրատել ջանաս։ Ահա լցաւ առ քեզ բանն ա̃ն. ունել 'ի յաչաց գերան. և հանել ջանաս յինէն զշիւղ։ Այսու բանիւ գնաց եպիսկոպոսն. հովուել զհօտն իւր։
ամէն։


A
F
E
D
H
B
C

Երանելոյն Եփրեմի · Ճառ վասն ապաշխարութե ·

Ասէ երանելի մարգարէն Եզեկիէլ · անօրէն եթէ դարձի յանօրէնութենէ իւրոց զոր արար և արասցէ արդարութի և ողորմութի · կելով կեցցէ և մի մեռցի, զի ամ՝ անցանք իւր զոր յանցեալ իցէ և անօրէնութիք իւր զոր անօրինեալ իցէ մի յիշեսցի ։ Այլ ողորմութբ իւրով զոր արար կեցցէ · վս որոյ բազմօք զանց արարեալ փութասցուք հասանել յընչաւետ հօր առատորդին · որոյ անուննն կեանքն է և լոյս և փրկիչ յոր հաւատացաք յոր մկրտեցաք և լուսաւորեցաք ։ Որ զհայր կողոպտէ և զիւրան զգեցուցանէ · զփառսն զոր ետուր ինձ · ետու նց · որ զձեռանէ առեալ զիւրոցն ՚ի ծոց հօր մուծանէ · կամիմ զիւրես ՚ի



ցեմ

ցեմ և սոքա ընդ իս իցեն, որ լանջակից
և գրկախառն հօր կացուցանէ. զի ոպ̃ դու
հայր 'ի յիս և ես 'ի քեզ և սոքա ընդ իս և
ընդ քեզ 'ի մէջ իցեն: Ո՜վ սքանչելեացն:
Ո՜վ երջանիկ աւետեացն: Ո՜վ ան չափ
մարդասիրութեանն: Մատթէոս երէկ մաք
սաւոր կողոպտիչ անողորմ, այսօր եկեալ
'ի ծոց հօր բազմի: Պետրոս ուրացաւ
զք̃րն. այսօր գահ 'ի վերանցեալ բազմի
'ի ծոց հօր: Պօղոս հայհոյիչ և հալածիչ
եկեղեցոյ. այսօր յանճառսն մտեալ 'ի մի
որտին հանդիսի: Ընդէ՞ր անագանի. ա-
րէք փութասցուք առ այնպիսի ողորմած
տ̃րն: Մի յապաղեսցուք. մի հեղ գաս
ցուք. եթէ զբազում աշխարհօք և զգա
ւառօք պխտոյեր անցանել. առաւել փու
թայիէր երագեալ անկանել առաջի նր̃
գթութեանն և անչափ մարդասիրութեանն:
Նայլ նր̃ ծանուցեալ զհեղգութիւս մեր,
և զանփութալի ծուլութիւս. առ դուրս
եկեալ առ սեամս մատուցեալ. ձայնէ
առ մեզ և կոչէ ուժգին, եկայք առ իս
ամ̃ վաստակեալք և բեռնաւորք և ես հան
գուցից զձեզ. վարանեալքդ և ձանձրա
ցեալքդ և գտջիք հանդիստ անձանց ձե
րոց զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոք

բոգի· չէ պահանջող· ոչ կշտամբիչ, ոչ
յանդիմանիչ· միայն զլեզուս շարժէ և
խոստովանէ զոր գործեցեր. բեռնիմ փոք
րոգիկ թեթև· անաշխատ. զոր եթէ
կամիցիս դիւրաւ տանիցիս. իսկ դու ընդ
էր տարակուսիս և դանդաղիս և վախվա
խես. ո՞չ թէ ՚ի մեծամեծ տանջանս
մտանել. և կամ ՚ի նեղութիս և ՚ի վտանգս,
և ոչ դաս յուղղութի՛ն: Դարձեալ նր ծա
նուցեալ զհեղգութիս մեր՝ զամենա պե
տութին իւր ցուցանէ և հարցանէ.
զի՞նչ կամիս ո՞ւմ բաղձաս, հիւա՞նդես,
ես ճարտար բժիշկեմ· ոչ է պիտոյ բժիշկ
ողջոց այլ հիւանդաց ձրի բժշկեմ· չպա
հանջեմ ինչ ՚ի քէն բայց միայն զդեղն.
ոչ առ վաճառականս առաքեմ· ոչ ինչս
ծախել· ոչ յայլմէ աղերսել· մուտ ՚ի սե
նեակ սրտի քո· բեր ինձ արտասուս որ
չափ և ձեռն հասիցես. եթէ մի կաթիցէ
բաւականէ մկրտել զքեզ երկրորդ անգամ
և յառաջին փառսն հաստուցանել: Եթէ
մեղաւոր ես. ես ողորմածեմ, ոչ եկի կո
չել զարդարս այլ զմեղաւորս յապաշխա
րութի որք առիս դարձան ոչ ամաչեցին.
և ոչ ոք ՚ի նոցանէ կորեաւ բայց միայն
թիւրեալքն ՚ի ճշմարտութենէ· զմաքսա



ւորն

ւորն մի ով բանիւ արդարացուցի. զպոռ
նիկն իւրով արտասուօքն արդարացուցի
և սրբեցի զբժշկութին և զողորմութին
պարգևեցի ամենեցուն։ Պետրոսի ընդ
դէմ իմ ուրացողին զիս. երիցիս անգամ
արտասուայն ողորմեցայ առ իս կոչեցի և
'ի կարգի առաքելութե պահեցի։ Զիս
ձաղանօք 'ի խաչին դատապարտեցին. ա
ւարածք ողբային և սարսէին. և ես խա
չահանողացն աղօթս առնէի. նզ̃ բարկու
թբ̃ և սրտմտութբ̃ զգլուխս իւրեանց
շարժէին. ես քաղցրութբ̃ և ողորմութբ̃
թողութն խոստանայի. և ապա զինչ կա
տարումն. զա̃մ հեթանոս ողորմութբ̃
կոչեցի յորդեգրութն. ածի զօտարոտի
աշխարհն 'ի գաւիթ սրբութե իմոյ. և
եղև մի հօտ և մի հովիւ. ես նոյն եմ և
ոչ փոփոխիմ. երեկ և այսօր. նոյն և յա
ւիտեանս։ Ծարաւի ես. ես եմ աղբիւրն
կենաց քաղցրաբուխ և անուշամ ճաշակ.
եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առ իս և
արբցէ և որք արբցեն մի ծարաւեսցին
յաւիտեան. այլ և գետք յորովայնէ նը
բղխեն ջրով կենդանութե քաղցրալիս
ես եմ հացն կենաց 'ի յերկնից իջեալ.
եթէ ոք ուտիցէ 'ի հացէս յայսմանէ կեց

 ցէ

ցէ յաւիտեան: Մերկացար՝ ով մեղաւոր ես պատմուճան քեզ և վերարկու միայն 'ի չարեացդ արտաքսէ և ես ագուցից քեզ զառաջին հանդերձն. զի որք 'ի Քս մկրտեցարուք զՔս զգեցեալ էք: Ով մեղաւոր՝ եթէ կարօտացար կօշկաց ես կարեցից քեզ կօշիկս լաւագոյնս որով կոխեսցես զօձս և զկարիճս և զամ զօրութիւնս թշնամւոյն: Ով մեղաւոր ծառայ գտար մեղացն, ես ազատեմ զքեզ. զի ամ որ մեղս գործէ ծառայէ մեղացն: Իսկ եթէ որդին ազատեսցէ զձեզ. ճշմարիտ ազատք լինիցիք: Ով մեղաւոր՝ խորշիս ինչ յիմ յահեղ և 'ի հրատեսիլ զօրութենէս. մի երկնչիր, չեմ օտար՝ ազգականեմ քո, որդի եմ դաւթի, թոռնեմ աբրահամու. խօսակից և մարմնակիցեմ քեզ: Եւ այս զի՞նչ կամիցիս ով մեղաւոր, ծառայ եմ քո ասա ինձ զոր ինչ բարի կամիցիս վս քո, դու հրամայեա տիրաբար և ես առնեմ ծառայաբար. քանզի ոչ եկի պաշտօն առնուլ. այլ պաշտել և տալ զանձն իմ փրկանս փոխանակ բազմաց: Ով մեղաւոր կամիս զի զոտս քո լուացից, ասա ինձ ոչ գարշիմ. զի սովորեմ առնել. թէ զմատնչին զիս 'ի մահ զոտսն լուացի և ոչ



տաղա

տաղտկացայ․ ապա ո՞ր չափ առաւել
զգոյդ. ես զիմոյ խոստովանողին զգլուխս
և զոտսդ լուացից առանց դանդաղանաց,
ոչ 'ի յայլ ինչ իրաց մաքրեմ․ այլ 'ի մեղաց
արբեմ և վերստին մաքրեմ։ Ո՛վ մեղաւոր՝
դու մի շիթ յարտասուաց հեղ 'ի կոնքս․
և ես քան զհոսանան յորդանանու յորդա
գոյն հեղում 'ի քեզ և քան զառաջին մկր
տութին պայծառագոյն լուսաւորեցից ։
Ո՛վ մեղաւոր՝ յաճա՞խ մեղար․ զազրացա՞ր․
երկեա՞ր 'ի քննողես․ մի կասկեր զխոստո
վանութիդ․ և ես արձակեմ զիմ բարե
րարութիս․ ոչ պետրոսին սահմանեցի
զկետն դարձեալ քեզ սահմանեմ։ Ո՛վ մե
ղաւոր՝ կամիս որ հաշտիմ ընդ քեզ․ դու
մեկնեա 'ի քո չար սովորութենդ․ և ես մեկ
նիմ յիմ արտմութենէս․ դու հարց վս մե
ղաց քոց զի եօթն անգամ թողութին․
և ես պատասխանեցից քեզ զի օթանասուն
եւթն և եօթն զոր քեզ շնորհեմ թողութի․
զի զոր ինչ ելանէ ընդ շրթունսիմ զայն
ոչ ստեցից․ քննեա զչափդ իմացիր զթիւդ
և զհամարդ՝ և մի տրտնջեր զտանուտեա
նես ։ Ո՛վ մեղաւոր՝ կամի՞ս զի թողից
զպարտս քո, չեմ ժլատ՝ առատեմ․ ընչա
ւէտ հօր մեծատան որդի․ չտոկոսեմ


զպար

զպարտապանդ չպահանջեմ զպարտսն
չարկանեմ խեղդ. դու միայն յանձին կալ
և խոստովանէ զոր գործեցեր և ես չորեք
հարիւր և ըն ընսուն քան քար թողում
քեզ. և ուրախ արձակեցից զքեզ։ Ո՜վ մե
ղաւոր ընդէր փախչիս յինէն վս̃ զի բա
զում մեղար. եկ առիս որդեակ իմ ողոր
մելի զի ոչ բարկանամ և ոչ մեղադրեմ.
վս̃ զի 'ի մես արարած 'ի մես պատկեր.
իմ նմանութի̃. անարատ ձեռաց իմոց
ստեղծուած. և նորին աղագաւ խնայեմ
և ոչ եղծանեմ զպատկերդ, ոչ խանգարեմ
զստեղծուածդ. ոչ ապականեմ զնմանութիւ̃։
Ա՛ս ողորմածեմ՝ և գթած. երկայնամիտ
և բազում ողորմ։ Ո՜վ մեղաւոր. ոչ դժո
ւարին ինչ խնդրեմ 'ի քէն. և դու զի
տարակուսիս. միայն դարձ առիս. և ես
դարձայց առ քեզ. միայն յապաշխարու
թի̃ փութա. միայն խոստովանեաց զմեղսդ.
միայն մեղայ ասա անկանելով առաջի իմ.
և ես փառօք պատուեցից զքեզ։ Ո՛վ մե
ղաւոր եկ առիս և մի ամաչեր. քան զի
չաղարտեմ զմեղսն. չանգոսնեմ զգործոդ.
չյանդիմանեմ զմեղաւորդ չբերեմ յերես
զխայտառակութի̃դ չյիշեմ զբազմութի̃
չարեացդ չմեղադրեմ հեքացելումդ. այլ

ողորմիմ անցաւորիդ. այլ գթամ 'ի կորուս
տեալդ. այլ կենդանացուցանեմ զմեռ
եալդ: Ո՜վ մեղաւոր մի տրտմեցուցաներ
զարարիչս քո անդարձութեամբդ. մի մի պատ
ճառեր զպատճառս զմեղաց ապա շնորհ
առներ զիմ մարդասիրութիւս. մի խան
գարեր զիմ արարչութիւն. մի արտաքս պա
հել զիս յիմ տաճարէդ. մի զիս զրկել
յիմ բնակութենէդ. մի կողոպտել յիմ ան
գին գանձէդ. որ ոչ եթէ այլ իրօք ստա
ցայ զքեզ. այլ զարիւնս իմ ետու գին
և ապա ստացայ զքեզ. և եթէ ողորմիս
ինձ որ սուգ ունիմ դառն 'ի վերայ կորստեան
քո և զղջանաս 'ի չարեաց քոց. ես այն
պէս ծարաւի եմ քո փրկութեանդ որպէս եղ
ջերու 'ի յաղբերս ջուրց: Ո՜վ մեղաւոր
արա ինձ ողորմութիւն և շնորհեա զոր ինչ
խնդրեմ: Տուր ինձ զոր կամիմ զա
պաշխարութիւն: Տուր ինձ զոր սիրեմ
զղջումն: Տուր ինձ զոր ցանկամ զկաթ
մի յարտասուաց: Տուր ինձ զոր փափա
քիմ զհառաչ մի 'ի խորոց սրտէ: Տուր
ինձ զոր բերկրիմ զտխրութիւն կերպարա
նացդ: Տուր ինձ զոր խրախանամ զհամ
բարձումն ձեռացդ և զտատանմունք մա
տանցդ: Տուր ինձ զոր ցնծամ զբանիւ


խոստո

խոստովանիլն. և ես սէրովբէից և քերով
բէից հաւասար բարձրացուցից քեզ ։
Ո՜վ մեղաւոր՝ ասա ինձ զինչ վնաս արարի
քեզ՝ որ այս քան 'ի սուգ և 'ի լաց պա
հես զարարիչս քո չարեացդ անդարձու
թբ. վն այն որ յոչ գոյ է 'ի գոյ ածի.
զի յամն կենդանեաց զքեզ ընտրեցի. զի
յանասնոց բաժանեցի. զի մարդ արար
չագործեցի. զի յիմ նմանութիս ստեղ
ծի. զի ծնուօքս յօրինեցի. զի պատկերա
կից ինձ անուանեցի. զի բանականութբ
պատուեցի. զի իմաստութբ զարդարեցի.
զի բազմազան հանճարովք փարթամա
ցուցի. զի ազգի ազգի արհեստիւք ճո
խացուցի, զի իշխանութբ մեծացուցի,
զի 'ի վր ամի կացուցի. զի զերկինքն լու
սաւորօքն. և զօդս թռչնօք. զծով լեղա
կօք. և զերկիր ամ կենդանեօք տնկովք
և բուսօք. 'ի վայելչութի և 'ի հնազանդու
թի քեզ ետու. և այժմ 'ի վր այսր խոս
տանամ կեանս յաւիտենականս. և արքայ
ութի երկնից ։ Արդ հարցանեմ զքեզ
քաղցրութբ ով մեղաւոր և ոչ խստութբ
ասէ ասա ինձ այժմ վնասապարտեմ քո
եթէ երախտաւոր. եթէ արդարութբ
խօսիս ոչ եմ վնասապարտ քեզ այլ երախ


տաւոր.

տաւոր . իսկ եթէ երախտաւոր՝ ապա ընդ
կէր միաբանեալես ընդ թշնամւոյն իմոյ
սատանայի․ և խոցես զիս 'ի լեարդս իմ
յամ աւուր քառասայրի սրով: Ո՜վ մե
ղաւոր՝ իմացիր և գիտեա զի սուր մեղաց մե
ղաւորին առաւել խոցէ զիս և վիրաւորէ
քան զբազումս կողից իմոց որ խոցեցայ.
գեղարդեամբն 'ի վր խաչին . սաստկագին
կսկծեցուցանէ քան զհարուածս բևեռացն
'ի խաչահանողացն 'ի ձեռս և 'ի յոտս.
ուժգին մորմոքեցուցանէ զիս սուր մե
ղաց մեղաւաւորին . քան զհարուածս փուշ
պսակին 'ի գագաթ գլխոյս որ կսկծեցոյց
'ի յոսկր և յուղեղ . առաւելապէս դառնա
ցուցանէ զճաշակելիս և զքիմս իմ դառ
նութի և գարշահոտութի մեղաց մեղաւո
րին . քան զլեղին և զքացախն զոր արբի
'ի վր խաչին: Ո՜վ մեղաւոր՝ գիտեմ կի
զազգս խաչահանողաց իմոց յորժամ տե
սանես ատես զնս և անարգես . այլ և կա
միս մահու սպանանել . զի զք̃րս քո 'ի
խաչ հանին . և դու անմտութե յամ
աւուր զգործս նց գործես յիս չարաչար
մեղանչելովդ . արդ դադարեայ 'ի չար
եացդ և եկ ի զղջումն սիրելի որդեակ իմ.
զի մի զբաժակ դառնութենն զոր արբու

ցանելոց եմ նշ՟ և քեզ ջամբիցեմ: Ո՞վ
դասք մեղաւորաց ասացէք ինձ. զի՞նչ
չար արարի ես մարդոյ. որ այդ քան ե-
րեսէք շրջեալ ՚ի քաղցրաբարոյ արար
չէս ձերոյ ոմ՟ ՚ի թշնամոյ: Ո՞չ ապաքէն
մարդն էր որ կոխեաց զհրամանս արարչին
և ցանկացաւ ած՟անալոյ. և ես փոխանակ
նր՟ մարդեղէ. և մարդն ած՟ացուցի. ոչ
մարդն էր որ մերձեցաւ ՚ի ծառն. և ես
՚ի խաչն զիս բարձրացուցի. ոչ մարդն էր
որ ոտիւքն ընթացաւ. և ես զբևեռն
յոտս ընկալայ. ոչ մարդնէ որ ձգեց
զձեռն իւր ՚ի ծառն. և ես ՚ի խաչին տա
րածեցի. ոչ մարդն էր որ քաղցրացաւ
՚ի պտղոյն. և ես զքացախն և զլեղին ար
բի. ոչ մարդն էր որ հաւանեցաւ կողած
նին և եկեր ՚ի պտղոյն. և ես զկողս իմ՝ վս՟
նր՟ ՚ի խաչին բացի. ոչ մարդն էր որ
զգործս անիծից գործեաց և ես վս՟ նր՟
կոչեցայ յանէծք, ոչ մարդն էր որ ոչ ա-
սաց մեղայ և ես զելի ելին ՚ի խաչին առ
հայր գոչեցի. ոչ մարդն էր որ մահու
դատապարտեցաւ. և ես ՚ի խաչին զմահ
յանձն առի. և դուք մեղաւորք ՚ի յայս
քան բարերար արարչէս ձերմէ երես
դարձուցանէք. որ քաղցրութե՟ աղաչեմ

զձեզ գալ 'ի զղջումն և ապաշխարութիւն
և առնուլ զթողութիւն։ Ով մեղաւոր տամ
զդատաստանիմ 'ի ձեռս քո. և դու արա
ինձ իրաւունս. եթէ ես ոչ սիրեցի զքեզ՝
ապա և դու յիրաւի ատես զիս և եթէ սի
րեցի դու ընդէ՞ր դարշիս յինէն և 'ի բաց
փախչիս որպէս որք դարձուցանեն զերեսս
'ի յորդն ալից շանէ։ Իսկ եթէ ասիցես
եթէ ոչ կատարելապէս սիրեցեր զիս.
լուր ով մեղաւոր՝ ընդէ՞ր զմտաւ ածես
զայդ զի ոչ է ճշմարիտ կարծիքդ. զի ես
զաշխարհս բոլոր լրիւ իւրով վասն քո ստեղ
ծեցի. զդրախտն վասն քո յօրինեցի զերկ
նից արքայութիւն վասն քո պատրաստեցի.
զտեղի անկելոց հրեշտակացն որ բարձ
րագոյնէ քան զամենայն տեղիս հրեշտակաց.
ես զհրեշտակք ոչ արժանացուցի. այլ
քեզ պատրաստեցի. միայն դու դարձիր
'ի մեղաց քոց. և ես բերից զքեզ զի տես
ցես և վայելեսցես ընդ հրեշտակսն։
Տես ով մեղաւոր զի վասն քո յերկնից 'ի
յերկիր խոնարհեցայ Աստուած մարդեղէ և
Տէրս ծառայ. վասն քո յատենի կացի իբր
զչարագործ 'ի հրէից դատապարտեցայ
'ի պիղատոսէ գանահարեցայ 'ի հերովդէէ
կատակեալ արհամարհեցայ. վասն քո 'ի զի



նուորացն

նուորացն ձաղեցայ. 'ի ծառայիցն ապտա
կեցայ. 'ի քահանայիցն թուք յերեսս ըն
կալայ. 'ի ժողովուրդենէն նախատեցայ:
Ո՜վ մեղաւոր վն քո զխաչն իմ յուսով
բարձի և հանի գողգոթայ. վն սիրոյ քո
հայհոյեցայ թշնամանեցայ. և խաչեցայ՝
վն քո բևեռօք պնդեցայ տիգաւ խոցե
ցայ պսակ 'ի փշոց ընկալայ. քացախ և
լեղի արբի քղամիդ նախատանաց զգե
ցայ. զածային գլուխս խոնարհեցուցի,
զհոգիս 'ի ձեռն հօր աւանդեցի. վն քո
'ի մարդկանէ պատեցայ. մարմնով 'ի գե
րեզման իջայ, հոգով 'ի դժոխս գնացի
և զարգելեալ հոգիսն ազատեցի. 'ի յեր
րորդ աւուր յարեա և զքեզ յարուցի 'ի
մեռելութենէ մեղաց: Ո՜վ մեղաւոր տես
թէ որ չափ սիրով սիրեցի զքեզ. զի յոր
ժամ վն քո զմահն կրեցի յիս 'ի խաչին
հայր իմ տրտմէր 'ի վր միածին որդւոյ
իւրոյ. և փառակից հոգին իմ 'ի վր եա
ցիս իւրոյ. զի՞նչ ասացից զդասուց հրեշ
տակաց թէ որ պէսի սուգ անհնարին
եղև և 'ի մէջի նց. քան զի կիզէր 'ի կրակ
ծոյն երկինքն երկնաւորօքն յորժամ տե
սին զստեղծիչս իւրեանց 'ի խաչին մա
հացեալ. և թէ ո՞րպ արարածքս ամ սուք


աւեալ

առեալ ողբային անմխիթարելի. յորժամ
տեսին զարարիչս իւրեանց մերկացեալ'ի
խաչին. և զմահ յանձն առեալ. զի արե
գակն և լուսինն հանդերձ ամ աստեղօք
մերկանային զլոյս իւրեանց և զխաւար
զգենուին. և երկիրս 'ի հիմանց սասանէր
և դողայր. վէմք պատառէին. և վարա
գոյր տաճարին 'ի յերկուս ծուէնս ցելոյր·
և մեռեալքն մարմնով ոչ կարացին հան
գուրժել. այլ'ի գերեզմանացն յարուցեալ
ողբային ընդ արարածոցս և վկայէին յա
րութն իմոյ: Ով մեղաւոր գիտես և զայս
թէ 'ի գիշերին յայն յորում ըմբռնեցայ
թէ որ քան սուգ և տրտմութի կայր 'ի
մէջ սիրեցեալ աշակերտաց իմոց. և տես
զսաստկութի տրտմութե. որ առաքելոցն
զի մինչդեռ ոչ էին կալեալ զինուորքն
զվարդապետս իւրեանց նք ոչ կարէին'ի
բաց ունել զաչս, այլ'ի խստութե տխրու
թեցն անկանէին'ի քուն որպ զթմբրեալս·
իսկ ես մեկնէի 'ի նոցանէ իբրև քարըն
կէց մի և առ հայր աղօթէի: Ով մեղա
ւոր ծանիր և զայս. զի մարդ յորժամ մա
հու երկիւղ կրէ. քրտունքն ջուր է որ հոսի.
իսկ ես վն սիրոյ քո այն քան թոյլ տուի
երկիւղին 'ի յածացեալ մարմինս իմ. որ


քրտունք

քրտունք իմ արիւնախառն կայլակնացեալ
և վտակ վտակ իջանէին ընդ ճակատս իմ:
և մարմին իմ յահագին երկիւղէն սասա
նոյր և դողայր յոտից մինչև ցգլուխս. և
արտասուք իմ հեղուին ոպ̃ զաղբիւրս. և
կայի անկեալ երես 'ի գետին և առ հայր
աղօթէի եթէ հնարէ անցցէ բաժակս
այս: Ո՞վ մեղաւոր իմացիր թէ ո՞ր չափ
սիրեցի զքեզ. զի յորժամ հրէայքն պա
շարեցին զիս սուսերօք և բրօք և ջահիւք
լապտերօք. ոչ կարէին ճանաչել զիս. վս̃
զի այն քան ծարաւիքէին արեան իմոյ
զի որք անծանօթէին յինէն և ոչ էին տե
սեալ զսքանչելիքն իմ, զնս̃ առաքեցին.
զի մի գուցէ ողորմիցին և փախուսցեն և
ոչ ըմբռնիցեն. իսկ ես հարցի քաղցր ձայ
նիւ զո՞ խնդրէք. և նք̃ ասեն զյս̃. ասա
ցի ես եմ, և նք̃ յահէ իմէ զգետնի հա
րան. և ես գթացեալ յարուցի զնս̃. իսկ
նք̃ ոչ ողորմեցան ինձ, եհար պե րոս
սրով և 'ի բաց եհան զունկն ծառայի
քահանայապետին. իսկ ես զունկն պետ
րոսի արգելեալ յետս դարձուցի. և զհա
տեալ ունկն առեալ եդի 'ի տեղին, և
բժշկեցի և ոչ այսու գթացան 'ի յիս.
զինչ ասացից զան ողորմ բարուց նց̃. զի



թէ

թէ անդամալուծն որ անկեալ կայր. ՚ի
որահէին բեդեզդայ զերեսուն և ութ ամ.
որ այն քան մ̃ր ոչ ունէր՝ զի երբ ջուրքն
յուզէին մուծանէին զնա ՚ի ներս բժշ
կեսցի. իսկ այլքն փաղփաղակի ընդ յու
զել ջրոյն իջանէին և բժշկեալ գնային.
իսկ տեսեալ իմ զտառապանս անդամա
լուծին այն խղճացի նմա և ողորմեցայ և
բժշկեալ ողջացուցի. դարձեալ տեսա
՚ի տաճարին և պատուիրեցի, այլ մի ևս
մեղանչել. զի մի ևս չար ինչ լինիցի քեզ.
իսկ ՚ի գիշերին յայն մինչ դեռ զինուորքն
կային ՚ի բացեայ և ոչ էին մերձեցեալ յիս.
անդամալոյծս այս վն̃ այն զի ճանաչէր
զիս յորմէ հետէ բժշկեալ էր իսկոյն փու
թացեալ ՚ի թուլչս հասեալ առաջի իմ.
և զառաչին ապտակն սա եհար յերեսս
իմ. և ես ինչ ոչ արարի նմա վն̃ զի մար
դասէրեմ. այլ և արքայութն̃ իմոյ արժա
նացուցի զնա: Արդ եթէ դա զայս գոր
ծեաց զհետ ինձ. ապա անծանօթ հրէ
այքն. և զինուորքն զի՞նչ արարին զհետ
ինձ ՚ի գիշերին յայն. և վն̃ սիրոյ մեղա
ւորիդ համբերեցի այս քանեացս. և դու
այսպիսի բարի արարչէս երես դարձու
ցանես. և զիս ՚ի սուգ դառնութն̃ պահես



և

և ոչ ողորմիս ինձ։ Ո՞վ մեղաւոր տես զսէր
իմ 'ի վ̄ր քո· զի յորժամ ըմբռնեցին զիս
Թողին զիս միայն աշակերտքն իմ և ինք
եանք փախեան, գառնս մի էր և գայլք
բազումք· ոչխարս մի էր և գազանքն յո
լովք· որոջս մի էր և արիւնարբուքն յա
ճախ· անմեղըս անապատի մի էր շանա
բարոյ որսողք յոքունք· եզն պարարակս
մի էր և զենողքն շատք· արդար աղաւ
նիս մի էր· և վայրենի Թռչունքն բազ
ումք· ողջախոհ տատրակս մի էր և սեւա
Թոյրմի ագռաւքն երամք· և Թէ զի՞նչ
գործեցին ընդիս ասացից և զայն։ Ո՞վ մե
ղաւոր լուր Թէ վ̄ա քո զի՞նչ կրեցի յոր
ժամ ըմբռնեցին։ Նախ մերկացուցին
զծիրանին իմ զանկապ պատմուճանն. և
ապա հանին զպարեգօտն իմ. բային
զգլուխ իմ և կապեցին զձեռս իմ 'ի Թի
կանց կուսէ· և արկին չուան 'ի պարանոցս
իմ· և սկսան տանել և Թէ ո̄ղ լուր և զայն։
Ո՞վ մեղաւոր յորժամ տանէին զիս կա
պեալ վ̄ս քո· որք յառաջմէնէին քարշէին
'ի վ̄ր երեսացս, որք զկնի ձաղէին զԹի
կունս, որք 'ի յաջմէ ապտակէին զծնօտս,
որք 'ի ձախմէ Թքալից առնէին զերեսս,
որք 'ի բացեայ հող արկանէին զգլխովս,

որք 'ի հեռուստ ձայն բարձեալ հայհոյ
էին և անարգէին որք սակաւ մերձ այ
պանէին և կատակեալ ծաղր առնէին նա
խատանօք կէսք փուԹով արշաւէին առ
տատու 'ի յապարանս քահանայապետին
և ասպա զինչ: Ո՛վ մեղաւոր երբև լսեցին
'ի յաւետայուցին, փուԹանակի ձայն ար
ձակեցին առ միմեանս եԹէ կապեալ են
զյս̃ և բերեն կապանօք, եկայք փուԹա
ցուք ընդ առաջ նր̃: Ո՛վ մեղաւոր ո՞վ ոք
էր որ յառաջ եկեալ բազմուԹեն որ ոչ
եհար զիս ո՞վ ոք էր որ ոչ ապտակեաց
զիս· ո՞վ ոք էր որ ոչ ձաղեաց զիս· ո՞վ ոք էր
որ ոչ եԹուք յերեսս իմ. ո՞վ ոք էր որ ոչ
գանեաց զկերպարանս իմ· ո՞վ ոք էր որ
ոչ կոփահարեաց զգլուխս իմ. ո՞վ ոք էր
որ ոչ բռնացի եհար զպարանոց իմ· ո՞վ ոք
էր որ ոչ բրօք ջարդէր զԹիկունս իմ·
ո՞վ ոք էր որ ոչ Թշնամնեաց զիս բանիւ.
կամ ոչ անարգեաց· կամ ոչ նախատեաց
կամ ոչ արհամարհեաց· կամ ոչ կատակ
եաց· կամ ոչ ծաղր արար· մինչ հասու
ցին յապարանս կայիափայ և աննային· և
ես վս̃ սիրոյ զայս ա̃մ կրեցի· և դու ա-
տես զիս և զմեղս սիրես: Ո՛վ մեղաւոր
եԹէ ասեմ զոր ինչ արարին ընդ իս· յոր


ժամ

ժամ յապարանսն մուծին կայիափայ և
անային · ոչ կարեն լսել և կամ տանել
այլ ասեմ փոքր մի ինչ: Ասացին ոչ ա-
նիրաւաբար դատեմք մեք զյ̃ս այլ օրինօք
և դատաստանաւ, դրին ատեն և նստան
քահանայապետքն հանդերձ ծերօք, կա
ցուցին սուտ վկայս, թէ հակառակ ա̃յ
է · և թէ խափանիչ օրինացն, թէ լու
ծիչ շաբաթու է թէ քանդիչ տաճարին է,
թէ հայհոյիչ ա̃յ է, և թէ գիտեմք զի
պոռնկորդի է և զանձն ա̃ծ քարոզէ, և թէ
զաւանդս ծերոց արհամարհէ և այլ ես
բազում · և այնու հետև սկսան 'ի յաղա
ղակ բառնալ և ասել ոմանք թէ մահա
պարտ է, ոմանք թէ 'ի խաչ հանել արժա
նէ · այլք պատառէին զհանդերձս թէ
հայհոյեաց զա̃ծ · այլք թէ չարագործ է.
և ես տարեալ համբերէի ա̃մի վ̃ն մեղա
ւորիդ: Ո՛վ մեղաւոր անտի հանեալ տա
րան 'ի տունն աննայի, անտի յապարանսն
պիղատոսի, անտի իջեանս հերովդէի,
անտի դարձեալ յապարանսն պիղատոսի ·
և զգիշերն ա̃մ ոչ ետուն հանգիստ ական
թօթափելմի · այլ շրջեցուցանէին յապա
րանէց յապարանս · և թէ որ չափ ծաղր
և նախատինս և անարգանս և չարչարանս


անցու

անցուցանէին 'ի գլուխս իմ զգիշերն ամ
'ի տարուբեր առնելն զայն ոչ ասեմ քան
զի ոչ կարես տանել։ Ով մեղաւոր սաս
ինձ զի՞ արդ լիցի քան զայն առաւել սէր
որ զքեզ սիրեցի, զի և ոչ մօր իմոյ մա
րիամու ածածնի խղճացի կամ ողորմե
ցայ· արդ ասա ինձ ով մեղաւոր յորժամ
տեսանէր մայր իմ զմիածին որդին իւր
զարարիչն երկնի և երկրի 'ի վ̃ր խաչին
մերկացեալ և զմարմին իմ արիւն ընդուշա
ներկեալ· բևեռօք պնդեալ· զկողս հեր
ձեալ· զերեսս իմ այլագունեալ զգլուխս
խոնարհեցուցեալ զոգիս աւանդեալ. և
'ի վ̃ր խաչին մահացեալ. արդ կարէ՞ ոք
իմանալ և կամ 'ի հրեշտակաց· թէ ո՞ր քան
սուգ ունէր նա ո՞ր քան կսկծեր ո՞ր քան
այրեր սրտիւ· ո՞ր քան մորմոքեր· ո՞ր քան
խարշատէր· ո՞ր քան վառէր· ո՞ր քան սգայր
ո՞ր քան հեծեծեր· ո՞ր քան հառաչէր· ո՞ր
քան տխրէր, ո՞ր քան խռովէր· ո՞ր քան
տագնապէր· ո՞ր քան յոգոց հանէր· որ
պի՞սի ողբայր· որպիսի՞ արտասուս հեղոյր·
որպիսի երգս եղանակէր· որպիսի՞ ձայնս
արձակէր· որպիսի՞ բանս բարբառէր, զի
ա՞րդ գիրկս խաչին արկանէր· զի ա՞րդ
զբազուկն իւր ձգէր առ իս, և ոչ հասա
նէր·

ներ․ զի՞ արդ յերկլեր անձկանէր․ զի՞ արդ
հող զգլխոյն տայր, զի՞ արդ կականէր․
զի՞ արդ թախանձէր․ զի՞ արդ խանդա
ղատէր․ ընդ դէմ միածնիս եւ րոյ մահա
ցելոյ․ զի՞ արդ զերկնային զօրսն ընդ ինք
եան 'ի յողբս խոնարհեցուցանէր․ զի՞ արդ
զզալի արարծքս ընդ ինքեան յարտասու
հանէր․ զի՞ արդ զխուզաբեր կանայսն ընդ
ինքեան յերկիր ընկենոյր․ արդ 'ի ժամուն
յայնմիկ ով մեղաւոր․ մայրն իմ որ զայս
պիսի կսկիծս կրէր․ մեռեալ եթէ կեն
դանի․ յարթնութե էր եթէ յերազի․ յի
մաստութե էր եթէ 'ի խելայ եղութե․
'ի զգաստութե էր եթէ 'ի թմբրութե․
և այսքան աղէտից մօր իմոյ ես ոչ ողոր
մեցայ ով մեղաւոր վս քո․ և դու երեսս
շրջես յինէն և 'ի թշնամւոյն կողմն դառ
նաս։ Ո՜վ մեղաւոր 'ի մայ որ այժմ քաղց
րութբ կոչեմ զքեզ յապաշխարութի և
դու ոչ լսես ինձ․ եթէ յանզղջութիդ
մեռանիցիս․ մի երկնչեր 'ի բազմութե մե
ղաց քոց որ քան յիմ երախտեացս և 'ի
չարչարանացս․ զի քան զմեղաց քոց հատու
ցումն․ հազարապատիկ տանջե[illegible]ացեմ զքեզ
'ի հնոցի հրոյն․ որ արհամարհեցեր զչար
չարանս իմ․ և ունայն նացուցեր զմարդե

 ղութիս

զուԹիս իմ. և 'ի զուր հաներ զի ջուռն
իմ յերկնից յերկիր որ վն̃ քո։ Ո՛վ մեղա
ւոր. 'իմայ զչարչարանքն իմ զոր կրեցի
վն̃ մեղաւորաց այն պարտքն 'ի վր̃ մեղա
ւորաց զի Թէ ապաշխարուԹե̃ ոչ վճա
րեսցեն զպարտս չարչարանաց իմոց և առ
ցեն ԹողուԹի̃ 'ի դատաստանին իմում
զմեղաց իւրոց հատուցումն այն չափով
եմ տալոց որ քան գործեաց. իսկ զպարտս
չարչարանաց իմոց հարկաւորապատիկ զի
արհամարհեաց։ Ո՛վ մեղաւոր ասա ինձ
զի՞նչ չարուԹի̃ տեսեր յարարիչս քո ք̃սէ.
որ այս քան ատես զիս կամ զի՞նչ բար
ուԹի̃ տեսեր 'ի սատանայէ որ այդ քան
սիրես և զկամս նր̃ կատարես քո զազիր
գործովդ։ Ո՛վ մեղաւոր միտ դիր ինձ որ
զսատանայի բարուԹի̃ն ցուցանեմ քեզ
զոր արար։ Ո՛չ սատանայէր որ զմայր քո
խաբեաց օձիւն և նովաւ զհայր քո ադամ։
Ո՛չ սատանայէր որ ետ ուտել հօր քում
զպտուղն, ոչ սատանայէր որ մերկացոյց
'ի լուսեղէն պատմուճանացն զհայր քո.
ոչ սատանայէր որ փախոյց զհայր քո յե
րեսաց ա̃յ և Թաքոյց 'ի ներքոյ Թզենոյն
Ո՛չ սատանայէր որ 'ի ներքոյ անիծից ա̃յ
մատնեաց զհայր քո և զմայր. ոչ սատա



նայէր

նայէր որ գրաւեաց 'ի ներքոյ մահու-
զհայր քո և զմայր. ոչ սատանայէր որ ետ
արտաքսել յա՟ծա վայելուչ դրախտէն ան
մահութե զհայր քո և զմայր. ոչ սատա
նայէր. որ զամս ին՟ն հարիւր կսկծեցոյց
ընդ դէմ անմահական դրախտին զհայր
քո և զմայր սաստկագին արտասուօք. ոչ
սատանայէր որ զպայծառութի՟ն լուսեղէն
պատմուճանին հօր քո 'ի մաշկեղէն հան
դերձ փոխարկեաց. ոչ սատանայէր որ
զան աշխատ վայելումն հօր քո 'ի պտղոց
դրախտին 'ի քրտինք երեսաց դարձոյց
վարել. ոչ սատանայէր որ զրկեաց 'ի հրեշ
տակական աճմանէն և արժանացոյց ա-
նասնական աճման և այն ցաւօք և տրտ
մութե՟. ոչ սատանայէր որ զհոգիս հօր
քո ծննդովք իւրովք զամս հինգ հազար
'ի դժոխս չարչարեաց անշէջ հրով մինչև
ես գթացեալ ողորմեցայ և եկեալ խաչիւն
ազատեցի ո՛րդ. եթե ընդ նախնի հայրն
քո ադամայ զայս արար. ընդ քեզ ապա
զի՞նչ կամի առնել որ այդ քան սիրես
զսատանայ, և դու միտ դիր զի և զքոյն
ասացից։ Ո՞վ մեղաւոր կամի զքեզ սատա
նայ որ ջնջէ 'ի հօր ա՟յ յորդեգրութէ.
կամի որ որոշէ 'ի հոգւոյն սրբոյ բնակու-

 թէ

թէ կամ որ բաժանէ զքեզ յորդւոյս ա՟յ
յեղբայրութէ. կամ զքաղցր սէրն ա՟յ
հօր որ զմիածինն ետ վ՟ն քեզ 'ի մահ 'ի
յատելութն փոխել. կամ զերթ և մերկու
թն հոգւոյն սրբոյ 'ի քէն արգերել. կամ
յորդւոյս ա՟յ յեղբայրական վայելչութէն
զրկել. կամ զտիրական տաճարդ հիմ
նայատակ քակել. կամ զարարչին իմաս
տութեն յօրինած պատկերդ 'ի յերկիր
կոխել. կամ զցանկալի տեղդ երրորդու
թեն չարաչար մեղօքդ եղծանել. և այլն
'ի կարգէն։ Ո՛վ մեղաւոր որ սկրեսդ զսատա
նայ, տես զցանկութն դորա վ՟ն քո ցան
կայ սատանայ վ՟ն քո. զաւազանին շնորհն
զոր ընկալար 'ի հոգւոյն սրբոյ 'ի քէն եղ
ծանել. ցանկայ զմկրտութէ լուսապայ
ծառ պատմուճանն զ՟քս զոր զգեցար
մեր կացուցանել. ցանկայ 'ի կենարար
մարմնոյ և յարենէ խմէ սովամահ զքեզ
սատակել ցանկայ զերկնային հարսանեաց
հանդերձդ աղտեղացուցանել. ցանկայ
զլապտեր կուսութէ քո շիջուցանել.
ցանկայ զբացեալ դրունս առագաստի
երկնաւոր փեսային ընդ դէմ քո փակել
ցանկայ զվայելուչ տունկդ ադենական
դրախտին 'ի տականց խլել. ցանկայ զնուադ

 գեղն

գեղեցիկ որ հաստատեալ ես 'ի ճշմարիտ
որթոյն որով հատանել. ցանկայ զծա
ղիկդ անթառամ զքեզ արարչին խորշա
կաւ մեղաց թառամել. և այն 'ի կարգին:
Ո՛վ մեղաւոր փորձեայ և զչարիլն սատա
նայի որ սիրեսդ զնա. չարի սատանայ
մն քո եթէ 'ի մեղացդ քո զղջասցիս.
չարի յորժամ զգործեցեալ յանցանքդ քո
խոստովանեսցիս. չարի յորժամ մեղայ
ասելով առ տր քո դարձցիս. չարի յոր
ժամ անկեալ յերկիր առիս արտասուօք
պաղատիս վիրաւորի դառնապէս յորժամ
յինէն զթողութն մեղաց քոց ընդունի
ցիս: Նախանձի բորբոքմամբ հրոյ յոր
ժամ զարարիչս քո ապաշխարութբ վեր
տին 'ի հոգիդ քո ընդունիցիս: Տոչորի
կսկծմամբ յորժամ յարարչէս քո փառօք
մեծարիս: Տագնապի մեծաւ տանջանօք
յորժամ յարարչէս քո բրաբիոնօք դու
պայծառասցիս: Կատաղի բարկութբ չա
րաչար յորժամ երկնային փառօքս իմ
պսակեսցիս. մահանայ չարութբ վիշապն
ով մեղաւոր յորժամ անվաղճան կենօք
ընդ հրեշտակս իմ պարարեալ յարքայու
թեան երկնից բերկրութբ հրճուեսցիս:
Տե՛ս ով մեղաւոր. որ սիրես զսատանայ

և կատարես զկամս նր̃․ եթէ զինչ խոս
տանայ քեզ․ խոստանայ քեզ սատանայ
բարութի զանդունդս անդնդոց։ Խոստա
նայ քեզ վայելչութի զգողեցեալ և զշա
րաւալից զտաղակալն և զագրալն թարա
խեալ տեսութի կերպարանց իւրոց․ որ
դառնայգոյնէ քան զհրոյ գեհեննին։
Խոստանայ քեզ ով մեղաւոր․ զպարակ
ցութի ժանտատեսիլ և զգարշա տեսիլ
դասուցն դիւաց։ Խոստանայ քեզ հան
գիստ զկաթսայս անդնդայինն եռանդիցն
և զգոգս հրաբորբոք տապականն։ Խոս
տանայ քեզ պատմուճան զխաւարն որ
տաքին որ է թանձր և շօշափելի
րալ աչացն և կրճել ատամանցն․ Խոս
տանայ քեզ սեղան զծոցս լայնութե ա
տակաց դժոխոցն։ Խոստանայ քեզ զենե
լիք․ զորդունքն ան քուն և զվիշապքն
ահագինք զհրեղէն ծովուն։ Խոստանայ
քեզ կերակուր զհալս քրոյից հալոցացն
զսարառելն իջելոցն։ Խոստանայ քեզ․
ըմպելի զսարսափելի հոսանս հրեղէն գե
տոյն։ Խոստանայ քեզ լապտերք զցոլ
մունս շանթից հրայ բորբոք փայլատակ
ման կայծականցն։ Թող զտարտարոսն
և զայլսն ամ զոր խոստանայ սատանայ

խուրոյ սիրողացն և կամ արարացն: Ո՛վ
մեղաւոր ընդէ՞ր զերախտիս արարչիս քո
ոչ իմանաս. զի սատանայ ա̃մ աւուր որ
քան մահու սպառէ քեզ. զի 'ի մեղս
մեռցիս. և ես աներևոյթ զօրութե̃ իմով
կկզեմ միշտ ո̃պ հրով. և հրեշտակք իմ
հարկանեն զնա հրեղէն սրով և 'ի բաց
փախուցանեն 'ի քէն զի մի մահու մատ
նեսցէ քեզ. գիտե՞ս չարն զի ես մարդա
սէր եմ և երկնչի եթէ կենդանի մնա
լո̃ց յանկարծակի զղջասցի. և ողորմու
թի գտցէ 'ի ձեռս ա̃յ. և ելանիցէ յինէն.
Ո՛վ մեղաւոր ընդէ՞ր 'ի բաց փախչիս 'ի
քաղ[illegible]քսէս քումմէ որ հրեշտակք ան
դա[illegible] տեսանելով ոչ յագենան քաղցր
ութե̃ իմոյ. զինչ չար առնեմ քեզ որ
այդպէս հրաժարես յինէն: Ա̃ այն զի
զմոլորեալդ խնդրեմ: Ա̃ այն զի զկո
րուսեալդ գտանեմ: Ա̃ այն զի զվիրա
ւորեալդ սփոփեմ: Ա̃ այն զի զհարուա
ծեալդ բժշկեմ: Ա̃ այն զի զնկղմեալդ
վե̃ր բերեմ: Ա̃ այն զի զտարաբերեալդ
'ի հողմոց հանգուցանեմ: Ա̃ այն զի
զծփեալ 'ի յալեաց խռովութե̃ց 'ի նաւա
հանգիստն ածեմ: Ո՛վ մեղաւոր 'ի միտ
առ թէ զինչ կամիմ քեզ առնել. և սէ

րեայ զՔ̃ս քո որ սիրեցի զքեզ և սիրեմ
զքեզ և սիրելոցեմ զքեզ. կամիմ 'ի հի
ւանդութենդ բժշկել զքեզ. կամիմ 'ի մե
ռելութէ մեղացդ յարուցանել. կամիմ
յամ̃ փարատելի սգոյդ հանել զքեզ. կա
միմ 'ի դառն տրտմութենդ մխիթարել
զքեզ. կամիմ 'ի սաստիկ վէրացդ բժշկել
զքեզ. կամիմ 'ի չար տառապանացդ զեր
ծուցանել զքեզ: Կամիմ 'ի տառուունս կա
պանաց մեղացդ արձակել զքեզ: Կամիմ
'ի ծառայութէ չարեացդ ազատել զքեզ:
Ո՜վ մեղաւոր ծանիր եթէ ան̃ յիշաչար
տէրս քո զի ոչ խորհիմ քեզ. խորհիմ զի
անձամբ իմով ելեալ զամբոժելի խոց
հոգոյդ քո տեսից: Խորհիմ զի զտարդ
ռեալ գարշութիս դորայ՝ ձեռօք իմովք
լուացից: Խորհիմ զի զաղտեղութի դո
րայ դաստառակաւ իմով սրբեցից: Խոր
հիմ զի զնեխեալն և զփտեալն 'ի դմա ատա
մամբ իմով կտրտեցից: Խորհիմ զի զգար
շելի թարախն 'ի հոգիդ քո բուսեալ
ով մեղաւոր զի լեզուաւ իմով ծծեցից:
Խորհիմ զի զգարշահոտ հոգիտ քո ով
մեղաւոր զի շրթամբք իմով ան յադա
բար համբուրեցից: Խորհիմ զի զա̃ծային
երեսս 'ի վէ̃ զազրալի հոգոյդ թաւալե

ցուցից ։ Խորհիմ զի զարտասուս իմ ա͞ծ
ային ով մեղաւոր 'ի վ͞ր աղտեղութե͞ հո
գւդ զի աղբիւրաբար հեղից ։ Խորհիմ
զի զբազմութի͞ ա͞մ չարեաց դորա ջնջեալ
մաքրեցից և յառաջին փառսն հասուցից·
միայն զղջա՛յ 'ի չարեաց քոց և դադարեա ։
Խոստովանեա՛ զյանցանս քո և սոսա մե
ղայ. և ես ջնջեմ զբազմութի͞ մեղաց
քոց Թէպէտ և կարի սաստիկես մեղու
ցեալ ։ Ո՜վ դասք արդարոց հաւատարիմ
ծառայք իմ· մի զարմանայք ը͞նդ անո
խակալ ծ͞ոսես ձերմէ· եթէ զի ա͞րդ այս
քան խանդաղատիս ո͞րդ մեր և արարիչ
'ի վ͞ր մեղաւորաց ։ Ա՛րդ միտ դիք զի ա
սեմ ձեզ զսէր իմ զոր ունիմ 'ի վ͞ր մեղա
ւորաց. դասք ինուց դասուց հրեշտա
կացն որոյ Թիւ բազմութե͞ն անԹուելիք
են 'ի մարդկանէ. և ան գիտելիք. այն
քան հրաբուն էութի͞քն և լուսապսակ
բազմութի͞քն ։ Յորժամ տեսանեն զսա
տիկ սուգ իմ զոր ածամ 'ի վ͞ր մ͞րոյ ան
դարձ մեղաւորի· ամենեքեան առ հասա
րակ մեծաւ դողութե͞ ջանան մխիԹարել
զիս և ոչ կարեն սակաւ մի հանդարտե
ցուցանել զսուգ իմ· որ քան տեսանեմ
զմի անդարձ մեղաւորն արտաքս 'ի գաւ

 Թե

թէ իմէ· այլ և գունդ ա՟մ արդարոցն որք կան առ իս յարքայութեան իմում. դողան ողբալով ընդ երեսս իմ· և ոչ բաւեն փոքր մի փարատել զտրտմութիւն իմ· որ քան տեսանեմ զմի անդարձ մեղաւորն հեռացեալս 'ի հօտէ իմէ· լսէ և զայլ ահաւորս որ պատմեմ զքեզ· զի մայրս իմ ա՟ծածին յորժամ տեսանէ զիս 'ի յայս քան տարակուսանս. 'ի ծունկս անկանի առաջի իմ և զստինսն բացեալ որով դիեցի· ողբալով աղաղակէ ընդ երեսս իմ և զմատունսն տատանէ ընդ դէմ իմ ասելով որդեակ իմ միածին· ոչ էր բաւական վիշտն այն և տրտմութիւն զոր կրեցեր զաշխարհի 'ի հրեից և 'ի խաչահանողացն· և դեռ ևս տրտմիս ընդէ՞ր ոչ ողորմիս մօրս քո լալագին և հանդարտել սակաւ մի 'ի տխրութենդ ո՞չ էր բաւական մօրս տառապելոյ կսկիծն այն և մորմոքումն յորժամ տեսի զմիածինդ իմ 'ի խաչին, արիւնաներկ մարմնով մահացեալ· և դեռ ևս որով կիզես զսիրտս իմ սուգ ունելովդ քո· և բնաւ ոչ բեր է 'ի սիրտ իմ ուրախութիւն որ քան տեսանեմ զանդարձ մեղաւորն 'ի ձեռն սատանայի: Նա և դիտասջիք զև

սոսկալիս զիս և հայր իմ և փառաւորեց զմե
հոգւոյն փութան ՚ի մխիթարութի իմ սա
կայն և ոչ այսուիկ դադարէ տրտմութի
իմ։ Այլ և զայս ևս ծանիջիք յարարչէս
յն ք՟է․ զի այն քան կսկծի սիրտ իմ և
տրտմի հոգի իմ․ ՚ի վ՟ր միոյ անդարձ մե
ղաւորի․ որ երկինս երկնաւորօքս․ և եր
կիրդ երկրաւորօքդ․ և ծով ա՟մ լրիւ իւ
րով իբրև յոչ ինչ համարին յաչս իմ․ և
դու ով մարդ մի զարմանար ընդ այս
քան աղէկկիզէլսիմ ՚ի վ՟ր մեղաւորաց․ ՚ի
քեն Ջանաչէ ով մարդ զի դու յորժամ
տնկես բարունակ մի և յետ երրորդ ամի
աշխատութե քո եթէ ոչ տացէ պտուղ
քեզ վիրաւորիս դու ընդ այն․ իսկ եթէ
չորասցի սգաս դու մեծաւ տրտմութ՟բ
թէ ՚ի զուր աշխատեցայ զերկսամս և
ջանն իմ կորաւ․ ապա զի ա՟րդ ես ոչ
տրտմեցայց ՚ի վ՟ր մեղաւորին․ որ վ՟ս նմա
յերկնից ՚ի յերկիր իջայ․ ՚ի կուսէ մար
մին առի․ ա՟ծս մարդ եղայ և ո՟րս ծա
ռայ․ զամս երեսուն և երեք ՚ի յերկրի
շրջեցայ․ կենարար վարդապետութ՟բս ՚ի
խնկես մեղաւորաց միշտ քարոզեցի․ ա՟ծ
ային նշանօքս զբազումս բժշկեցի ազգի
ազգի չարչարանս և նախատինս կրեցի․
՚ի

'ի խաչին բարձրացայ զարիւնս իմ զին
ետու. և 'ի գերողէն առեալ փրկեցի. արդ
այս ամ̃ չարչարանացս իմոց պտուղ փրկու
թ̃ն մեղաւորինէ. իսկ եթէ մեղաւորն
'ի մեղս մեռանի պտուղ չարչարանաց
իմոց կորնչի. և ես 'ի խորխոցիմ և վիրա
ւորիմ. զի ուն այն եղև տնօրէնութ̃ի
իմ վս̃ նր̃ իսկ յորժամ մեղաւորն զղջա
նայ 'ի մեղաց իւրոց և գայ յուղղութ̃ի.
ուրախանամես և ցնծամ. յայնժամ ցնծայ
ընդ իս հայրն իմ և հոգին ս̃բ. խրախա
նան և ա̃մ հրեշտակք իմ. հրճուին ա̃մ
գունդք արդարոց և ցնծացեալ բերկրի
մայրն իմ Թագուհի. և 'ի միասին պար
առեալ տօնախմբութ̃իս մեծ կատարեն
յերկինս առաջի իմ. վս̃ զի պտուղ չար
չարանաց իմոց ոչ կորեաւ. այլ եկաց և
մնաց: Ո՛վ մեղաւոր սիրեայ զիս որ սի
րեմն զքեզ. հրաւիրեայ առ. քեզ զբաղ
ձալիս հրեշտակաց և հրեշտակապետաց.
և զցանկալիս արդարոց. ոչ գարշիմ 'ի
հողեղէն յարկայց. չաղտկամ յաղքատու
թ̃ենդ. չխտտեմ զանմահութ̃իդ. մաքրեայ.
զառագաստ սրտիցդ. զոկիսր բուրել հոտ
անուշութ̃ե դաղօթս. պատրաստէ սեղան
զվէրադ. պարգևէ զինի զողորմութ̃եդ

 սփռէ

սփռէ պատսպարանակալ զխոստովանութիւնդ.
փթթէ վարդ զսէրդ: արդ բազմականս
զապաշխարութիւնդ. լարէ զատանալի մա
տանցդ ընդ դէմ իմ 'ի քննարահարութի.
կոչէ զՔրս քեզ 'ի բարեխօսութիւն և ինձ
հիւրամեծար. բաւականէ Ճաշտ. առատէ
սեղանդ. պայծառէ կոչունսդ: Ո՛վ մե
ղաւոր եթէ ախորժես զհայր իմ ընդ իս
ածել ես և հայր իմ առ քեզ եկեսցուք.
և օթևանս առ քեզ արասցուք. զայս այս
պէս արասցես և զիս երախտաւոր հօր
իմոյ կացուսցես. զի խորհուրդ գալստ
եան իմոյ յաշխարհ ոչ ունայն երևեսցի.
այլ ծանիցի մարդկային բնութիւս առա
ւել քան զհրեշտակաց և գեր 'ի վերոյ
քան զհրեշտակապետաց և խրախասցեալ
հայր օրհնեսցէ զքեզ բերանովն իւրով
զօրհնութիւս որ ոչ անցանէ. և պատրաս
տեսցէ զծոց իւր 'ի վեր քան զբնակու
թիւս հրեշտակաց. ուր ես նեմ այդ և
պաշտօնեայն իմ եղիցի և կեանքն ձեր
ծածկեալ են ինև առ ած. և ես 'ի միւսան
գամ գալստեան իմոյ զօրհնեալսն 'ի հօրէ
իմէ մերձեցուցից առ հայրն իմ և ասա
ցից. ահաւասիկ ես և մանկունք իմ զոր
ետուր ինձ: Ո՛վ մեղաւոր ընդէ՞ր ոչ եր

կնչիս յահեղ զօրութէ իմէ և գալ յու-
ղութն որ սիրով և քաղցրութբ կոչեմ
զքեզ յապաշխարութիւն ծանիր զի 'ի
հայելն իմ. երկիր. 'ի հիմանէ դողայ և լե-
րինք ոպ զմոմ հալին և ծովք իբրև զխռու-
չորանան և դժոխք յես խորագոյն ան-
դունդս ընկղմի, և զի որդ ոչ զարհուրիս
ով մեղաւոր զի զօրութեն իմ զհողմ և
զհուր հատանէ կամ թէ ոպ ոչ սոսկաս
զի անճառ բնութենք ահեղակերակից հա-
շեալ տապակին 'ի հրակիզմանէ փայլա-
տականց ահաւորութեն իմոյ. կամ զի
որդ ոչ սարսափիս. զի սերովբէք և քե-
րովբէք ծածկեն զդէմս իւրեանց բոցա-
նիւթ թևօք յահարկութեն իմէ. և զի
որդ ոչ դողաս ով մեղաւոր. զի թէ կայր
հնար փախստեան ոչ կարէր կալ կինք
առաջի իմ. նա և ամ տարրական աս-
տեղք և երկիր լռիւ իւրով հանդերձ
անդնդային հաստատութբն հեղցի յայլ
ևս ան հուն խորութեն յերկիւղէ իմէ.
և թէ ոպ ոչ սասանիս. զի թէ երկինք
երկնից ունէր և ստեղծ թաքստեան ոչ
հանդուրժեր կալ 'ի ներքոյ պատուան-
դանի տեղից իմոց 'ի յահէ իմէ. և կամ
զի որդ ոչ պատկնս ով մեղաւոր. զի


եթէ

եթէ գոյր հնար ծածկութե, ամ ընդաք
ան մահից դիմեալ անկանէ 'ի նա և
թաքչէին յերկիւղալի արփիափայլ ճա
ռագայթից իմոց. և վս այն զի ներեմ
քեզ ով մեղաւոր զի մի կորիցես զյաւի
տենական կորուստն. այլ 'ի զղջումն եկ
եալ փրկեսցիս 'ի հրոյ գեհենէն. և դու
արհամարհես զարարիչս քո և ոչ երկն
չիս և դողաս 'ի յահեղ զօրութէ իմէ:
Ով մեղաւոր մինչ դեռ ես քաղցրութե
խօսիմ ընդ քեզ երկնչիր յինէն ողորմեաց
քեզ. զի եթէ 'ի հրեշտակէն ոչ խնայե
ցի որ ընդ դէմ իմ հպարտացան. այլ
'ի յերկնից 'ի յանդունդս 'ի ջուցի բար
կութե իմով. և առնոյիւր յաճախեցան
'ի պոռնկութիս. զայն քան բազմութե
մարդկան առ հասարակ ջրհեղեղաւն
հեղձուցի. զսոդոմ և զգոմոր որ արտա
քոյ բնութե զչարիսն գործէին երկնայ
տեղեաց բոցովն կիզեալ մաշեցի. զգօ
ռոզն փարաւոն որ խստացաւ ընդ դէմ
իմ. բազմութե զօրօք իւրով 'ի ծովն
կարմիր ընկղմեցի. զկոր խանքն և զաբի
րոնեանքն որ զքահանայութին իմ բռն
ութե յափշտակել կամէին զերկու հա
րիւր և յիսուննսն 'ի հրոյ բուրուառացն


այրեցի

այրեցի . և զբանակն աւերոնի զերկիր պատառեալ յանդունդս ընկղմեցի . զե րեքով որ ընդ դէմ իմ թշնամի դարձաւ. զպարիսպս նր ոչ զջուր հեղի . և զբնա կիչս նր ՚ի սուր սուսերի մաշեցի ձեռամբ ծառային իմոյ եսուայ . զզօրսն սենեքա րիմայ արքային ասորեստանեաց որ հայ հոյեաց զանուն իմ սբ . զհարիւր և ութ սունսն հինգ հազարսն ՚ի դուռն քաղա քին իմոյ եհմի ՚ի յական թօթափելն ՚ի մէջ գիշերին ետու հրաման հրեշտակի իմոյ զի սատակեսցէ զնս հրեղէն սրով. արդ տես ով մեղաւոր ով է որ զհակա ռակ կամաց իմոց գործէ և ոչ չարաչար պատուհասի . նոյն ածն եմ եթէ ՚ի բա զումս ոչ խնայեցի . նոյնպէս և ՚ի մինդ եթէ քաղցրութն ձայնի իմոյ ոչ լուի ցես և զղջասցիս ՚ի մեղաց և դարձցիս . հարիւրապատիկ ես զքեզ առաւել տան ջելոցեմ քան զնս ՚ի գեհեան հրոյն . ոչ ասացի թէ դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի սոդոմայեցւոց և գոմորեցւոց քան քաղաքիս այսմիկ: Ո՛վ մեղաւոր . եթէ ասիցես ընդիս տր իմ . այսու հետև և ես սարսիմ և դողամ մեծաւ երկիւղիւ յահեղ զօրութէ քումմէ ոչ և ամ արա րածք .

րանք. բայց զի՞նչ արարից քանզի տա
րակոյս իմ 'ի բազմութէ մեղաց իմոց.
եթէ զիա՞րդ ողորմեսցիս և թողուցուս
ինձ: Ո՛վ մեղաւոր 'ի միտ առ զանուանքս
իմ և ուրախ լեր և մի տարակուսիր ընդ
բազմութե մեղաց քոց: Անուն իմ ողոր
մածէ. անուն իմ երկայնամիտ է. անուն
իմ բազում ողորմէ. անուն իմ անոխակա
լէ. անուն իմ ան յիշաչարէ. անուն իմ
քաղցրէ. անուն իմ ամենաբարիէ. ա-
նուն իմ մարդասէրէ. անուն իմ բժշկ
հիւանդացէ. անուն իմ յարութի անկե
լոցէ. անուն իմ կեանք մահացելոցէ.
անուն իմ լոյս խաւարելոցէ. անուն իմ
փրկիչ գերելոցէ. անուն իմ նորոգիչ հնա
ցելոցէ. անուն իմ գտիչ մոլորելոցէ. և
այլն 'ի կարգին և դու ընդէր տարակուսիս
ով մեղաւոր 'ի բազմութէ մեղաց քոց: Ո՛վ
մեղաւոր որով հետև խոստացար ինձ թէ
այսու հետև և ես երկնչիմ 'ի քէն դ իմէ և տա
րակոյսդ քո վՙ շատութէ մեղաց դէր. նմա
նապէս և ես այսու հետև յաւելում զսէրս
իմ. զգութս իմ և զողորմութիս իմ 'ի վե
քո և խրատ տամ քեզ եթէ զի՞նչ արաս
ցես դու: Ո՛վ մեղաւոր միայն զայս արա
ցես զի հրաժարեսցես 'ի հնազանդութէ



չար

չար կամացն սատանայի․ և հեռացիր 'ի
պիղծ գործոց սովորութենդ․ եկեսջիր 'ի
զզջումն ո՟պ զղամեք․ սոսա առ հայր քո
մեղայ ո՟պ զանառակ որդին․ խոստովան
եայ զբազմութն մեղաց քոց ո՟պ զմարգա
րէն դաւիթ․ աղաշխարեայ զանօրէնու
թիս քո ո՟պ զմանասէ․ աղօթեայ առ
տ՟ր ասելով ա՟ծ քաւեայ զիս զմեղաւորս
ո՟պ զմաքսաւորն․ արտասուեայ զ յանցանս
քո ո՟պ զպետրոս․ դադարեայ 'ի չար գոր
ծոց քոց ո՟պ զկինն պոռնիկ․ սոսա յիշեա
զիս յարքայութն քում ո՟պ զաւազակն․
և տես եթէ զինչ արարից ամենազօր տ՟րս
քո զբազմութն մեղաց քոց։ Ո՛վ մեղա
ւոր եթէ 'ի տուր և առ շնչոյդ զեօթա
նասնեկին եօթնես մեղանչել․ և թէ ան
թիւ է չարիք քո քան զաստեղս երկնից․
կամ ան համարէ անօրէնութն քո քան
զալիս ծովու․ և կամ շատէ քան զաւազս
որ ընդ ոլորտս տիեզերաց․ և թէ յաճախ
քան զշիթս անձրևաց կամ բազում քան
զմանրամազ փոշիս որք տարաբերին ընդ
օդս համատարած և թէ մեծ և ծանրին է
չարիք քո քան զա՟մ լերինս որ երեսս եր
կրէ և թէ անօրէնութնդ քո բարձրա
ցեալ է քան զերկինս․ և խոնարհեալ


դտանիցէ

գտանիցի քան զանդունդս և կամ լայնա
ցեալ բազմայ դիմի չարիք քո քան զո
լորտս ծագաց երկրի. կամ տարածեալ
անդր քան զշրջանս եթերական օդոյ:
Ո՜վ մեղաւոր եթէ մեղք քո և չարիք ըստ
այսմ չափոյս իցէ որ ասացի՝ ՚ի զղջանալդ
քո քան զթարթել աչիցդ. և քան զտուր
և առութն շնչոյդ. քան զարագութիւն
նշուլից արեգական. զերեւումն կայծա
կան որ ՚ի յօդդ. և քան զմտացդ ընթա
ցումն քո. առաւել ևս բիւրապատիկ քան
զարագութն սոցայ քաւութն շնորհեմ
քան բազմութն մեղաց քոց. քան զի ամե
նակարող արարիչեմ. և ոչ կարօտիմ ժա
մանակաց ՚ի քաւութն մեղաց և ո՛չ զպղպ
ջակ ջրոյ ՚ի յառնելն այն քան խստագին
հողմոյ մինչ զի զծառս ՚ի տական խլիցէ
և զաշտարակս քակ իցէ ո՞ր քան կարիցէ
զդէմ ունել այսպէս և մեղք բոլոր ամ
տիեզերաց ՚ի զղջանալն իւրեանց. բիւ
րապատիկ առաւել ոչ կարեն զդէմ ու
նել իմոյ ամենակարող զօրութնս: Ո՜վ
մեղաւոր իմայ զի դու մարդես չափաւոր.
և մեղօքդ քո թէպէտ բազում թուին
քեզ. սակայն և մեղքդ է չափաւոր ըստ
նմանութն քո. այսպէս իմայ զի ես ած
եմ

եմ անչափ նմանապէս ըստ իմում անչա-
փութեանս եւ ողորմութեան իմ անչափ արդ-
ով մեղաւոր դու յորժամ զչափաւոր
մեղք քո 'ի ձեռն խոստովանութեան 'ի մէջ
իմ անչափ ծովացեալ ողորմութեանս ձգե-
ցես. այնպէս չինջանի դիւրաւ. որպէս փոքր
մի կայծ առեալ 'ի մէջ համատարած
ծովուն ձգիցես: Ով մեղաւոր. զի որպէս
ազգի ազգի են ճանապարհք մեղացն.
նոյնպէս եւ զանազանք են դեղք ապաշ-
խարութեան քան զի. ոմանք խորգով եւ
մոխրով արդարացան. ոմանք լալով եւ
արտասուօք զՏէրն հաշտեցուցին. ոմանք
պահօք եւ աղօթիւք միայն ապրեցան.
ոմանք ողորմութեամբ ողորմութիւն գտին յի-
նէն. ոմանք մարդասիրութեամբ եւ տկարա-
գունիցն ծառայելով. ոմանք գետնայ-
խշտութեամբ. ոմանք խոնարհութեամբ եւ հնա-
զանդութեամբ թողութիւն մեղաց ընկալան.
եւ դու 'ի սոցանէ առ զմինն որ հեշտ
թուի քեզ եւ թեթեւ. եւ այնու կարողես
բժշկել զամենայն հիւանդութիւնս մեղաց քոց.
եւ ոչ թըւով ամաց եւ կամ բազում ժամա-
նակաց: Այլ միայն ուղիղ դարձիւ, եւ
ճշմարիտ սրտիւ 'ի չարեացն հեռանալ,
կարողես արդարանալ. վասն որոյ եւ դու


փութայ

փութայ ով մեղաւոր զի առաջ քան
զգալն քո զինչ և կարողասցիս առաքես
ցես յերկինս։ Եթէ աղօթս հանդերձ
արտասուօք։ Եթէ տքնութն մաքուր։
Եթէ սաղմոս երգութն ապաշխարանաց։
Եթէ ժուժկալութն հանդերձ խոնար
հութբ։ Եթէ հրաժարումն յերկրայնոց
իրացս։ Եթէ սէր անկեղծաւոր։ Եթէ
փափաքումն այ՟։ Եթէ պահք կամ ողոր
մութն։ Եթէ յառաջագոյն 'ի սոցանէ
առաքեսցես. վստահացիր զի 'ի հանդիս
տես գալոց և վայելելոց. ապա թէ ոչ եր
կիւղէ։ Զայս ամ՟ լսելով և իմանալով
զինչ կամիք 'ի պատասխանիսն լինել պատ
րաստ. յորժամ զաղերս ողաքանաց և
զգութ ան յիշաչարութն առաջի արկ
եալ. ամի զինչքն դնէ պարտականս պար
տեաց մերոց. 'ի գութ և 'ի գորով մտեալ
դարձեալ փարի զմեօք աղաչէ պաղատէ.
խնամարկէ խանդաղատի. պարգևս խոս
տանայ ոպ՟ հայր 'ի վր՟ որդեաց խարշի։
Եւ առաւել քան զչարիսն անցուցանէ
զխնամսն ոպ՟ զսարտուցեալ որդիսն տե
սանել. զի 'ի գիրկս առեալ. գրգուեն
համբուրեն զերեսն 'ի վր՟ դնեն. խանդա
ղական ձայնիւ գորովեն. զբարբառն ե


ղանա

ղանակէն· զծափս հարկանեն. ամիւ Նա
րին զհաշտութի՛ մանկանն· զի զլալն և
զհեկեկալն խափանեսցեն· Թէպէտ և ն͞ք
խաղապտել զերեսն այսր ա͞յդր դարձու
ցանեն· լեզուագարեն· զերեսն մագլեն
սակայն և ոչ ինչ յայնցանէ ցասուցանեն
ը՞զ ծնողսն, այլ և պարգևս տան ման
կանն զախորժակս իւր. խաղալիկս անօ
թս պտտուականս, եթէ ընկանէ չցաւէ,
եթէ կորուսանէ չի տրտմի· բայց եթէ
'ի հաշտութի՛ տեսանիցեն զի՛ջել մանուկն·
զայս և առաւել քան զայս ցուցանեն
մեզ դութք տ͞ծային խնամոցն զորոյ և
զխորձ առեալ հոգերգովին դաւթի
զգաստիկ ոխոյն տ͞ղ առ մարդիք ասէ.
ո͞ղ գթայ հայր 'ի վ͞ր որդւոց իւրեանց·
գթայ և տ͞ր յերկիւղածսիւր: Նա ես
առաւել զա͞ն չափական· և զանեզրական
ոխոյն իւրոյ· զանպատմելի և զանիմալի
գրգանս ինքնայ պատուա՛մ արարեալ ի
ձեռն ղուկաս աւետարանչին աւանդէ
մեզ առակով. ո՛ 'ի ձէն͞ջ որդի որ խնդրես
ցէ 'ի հօրէ իւրմէ հաց մի թէ քարտացէ
նմա. կամ թէ խնդրեսցէ ձուկն մի թէ
օձ տացէ նմա. իսկ եթէ դուք որ չար
դէք գիտէք զպարգևս բարիս տալ որդւոց

ձերոց. որ չափ առաւել ևս հայրն ձեր
երկնաւոր տացէ ձեզ զանճառ և զանբաւ
ուրախութիւն տեսէք որպիսի գեղեցիկ
էն պարգևք սիրոյ նորա աւելի արարած
եթէ ախորժէք և դուք լինիք որդիք սի
րոյ նորա որ կայ հանապազ 'ի բողոքել և 'ի
թուլել ըզ գազանացեալ բնութիւնս
մարդկայինս. արդ մի թէ քան զվեմս
ապառաժեցեմք որ դեռ ոչ քրքրեալ թո
լանան. և սրով տաշին 'ի պէտս գործոյ.
և եթէ երկաթ և զայն ևս հուր հալէ.
և անօթս պիտանացուս, 'ի ճարտարացն
գործին և եթէ գազան և այն ձեռն ըն
դել եղեալ և հարկադրեալք պապան
ձեալք կան 'ի դրունս թագաւորաց. առ
պատրաստ 'ի ծառայութի և 'ի հնազան
դութի նորա. զչարամտութի վիշապաց. և
զցասկոտ բարս թիւ աւուր օձից 'ի հնա
զանդութի ածեն բանք ողոքական թովչի
ճարտարի. և ընդ եղական ընդանութե
առ 'ի միմեանս ճարակէն. և արդասուն և
խօսուն և իմացական բնութի մարդկան.
զի արդ ոչ գեթ նմանի նորա թողուլ զան
զգամութիւն և եկեալ և այն զի պատգամք
սաղմոս երգողին կշտամբեալ յանդիմա
նէ. և տարեալ մերձ առ օձսն և քարբս

և կարիճս կացուցանէ ասելով․ սրտմտու
թին նց ըստ նմանութե օձի ո͞պ իժի և
քարբի զի խցեալէ զականջս իւր․ զի մի
լուիցէ նայ զձայն թովչի ճարտարի և
մի առցէ դեղ ՚ի դեղատուէ իմաստնոյ։
Բայց դու ով մեղաւոր․ նմանեայ մար
գարէին դաւթի ո͞պ ասէ դիր մի թէ որ
անկանիցի ոչ յառնիցէ․ ո͞պ և աստ ան
առք զի կատարեաց մարգարէն․ անկաւ
՚ի ձեռն ցանկութեն և յարեաւ ՚ի ձեռն
ապաշխարութեն․ աչօքն մեղաւ շնաց և
են պան․ լեզուաւն քաւեաց զի խոստո
վանեցաւ և ապրեցաւ։ Խոստովանութին
թեթևացուցանէ զծանրութի մեղաց։
Խոստովանութին զդեղս մեղաց հոսէ
իբրև զփոշի։ Խոստովանութին զբարդս
փշոց մեղաց այր է իբրև զհուր։ Խոստո
վանութին որ ուստի ելանէ զանօթն
ժանկակէր իբրև զոսկի պայծառագոյն
գործէ և որ մնացէ ոչ սրբեսցի։ Խոս
տովանութին է որ նովաւ ապաշխարու
թին զօրանայ և առանց նր որ չափ որ
գործի տկարանայ յաւիտեան։ Խոստովա
նութին զղջան դուռն․ ապաշխարութե
սկիզբն․ գլուխ արիութե․ առաքինու
թե․ զէն յաղթողին․ մեղաց վահան։


Խոս

Խոստովանութի· ապաշխարութե̃ առիթ
ապաշխարելոց պարիսպ· գլորելոց կանգ
նումն· գրգռեցելոց գաւազան· լեցե
լոցն ցուպ: Խոստովանութին ազատեղու
թե̃ մեղաց սրբող· անմաքրից մաքրող·'ի
տանջանացն ազատող· գեհեննին ահաւորն
փարատող· և դրախտին բացող: Խոստո
վանութին երկնից բացող· և առաջի տ̃ն
մուծանող· ապաշխարողաց հաւաքող մե
ղաց յապաշխարութի հրաւիրող մոլորե
լոց կոչող· 'ի քաղաքն երկնաւոր առաջ
նորդող: Խոստովանութին խաւարելոց
լոյս· որք 'ի մթի են Ճառագայթ· ման
կանց դաստի արական յուսից օրինակ յու
սոյ: Խոստովանութին եկեղեցոյ զարդ·
քահանայից քարոզ· գործողաց պսակ·
մանկանց առագաստի զգեստ· և հարսա
նեաց մտին բացող: Խոստովանութին
դրանց մահու փրկող· ա̃ծայինն սեղանոյն
հրաւիրող· մարմնոյ տ̃ն ջամբեցցող պա
տուական արեանն արբուցանող· և տրտ
մեցելոցն ուրախացուցանող: Խոստովա
նութին ապաշխարութե̃ դուռն· յանցա
նաց քաւիչ· ընդունողաց զնա մաքրիչ
թագաւորաց պլատանի աղքատաց ընդու
նելի: Խոստովանութին մեծամեծաց և


տնանկաց

տնանկաց պատսպարան. պոռնկաց քաւա
րան. աւազակաց պաշտպարան: Խոստո
վանութի բանաւոր մեղաւորաց հաւաքօղ.
քաղցր գործեաց վաստակօղ. դառնու
թե քաղցրացուցանօղ. և ա͞մ առաքինու
թեց զարդարօղ: Եւ արդ ո͞պ կարացից
գովել զխոստովանութին. զի ո՛ւր յան
ցանք լցէ՛ առանց սորա թէ բժշկապա
տիկ առաքինութիս գործիցեն ոչ ինչ
օգտին. և չէ ինչ հնար առանց սորայ
զյանցանս քաւել. ոչ եթէ պահես ոչ
եթէ աղօթես. ոչ եթէ ձգնիս. ոչ եթէ
ողորմութի առնես. ոչ եթե զա͞մ առա
քինութիս գործես: Եւ արդ դու ով
մեղաւոր որ չափ կարողութի է քո մար
տիր ընդ դէմ սովորական մեղացն քո մե
ծաւ աղօթիւք. և կոչէ քեզ 'ի բարեխօ
սութի զդասս սրբոց հրեշտակաց. և զա͞մ
ս͞րս և զարդարս մանաւանդ զս͞բ ա͞ծա
ծինն. ես առաւել զՔ͞ի ո͞ր չարչարանքն
և աղաղակէ առ հայր անդադար զի ողոր
մեսցի քեզ. և 'ի ձեռն հոգոյն սրբոյ տացէ
քեզ կարողութի ընդդիմանալ մեղացն.
և եթէ պատահեսցի զի յաղթիցիս ո͞պ
զմարդ տկար դու 'ի նոյն դառնալ
կանգնեայ և որ չափ անկանիս այն չափ

 արագապէս

արագապէս փութայ կանգնել. և ա՟ծ այնպէս ընկալցի զքեզ իբրև թէ բնաւ չիցես անկեալ զի թէ հանդերձ ինչ որ իցեխս և 'ի մօրաս անկանիցի դարձեալ յորժամ աղաւօք սպիտականայ ոչ թուի խոտան յաչս սգեցողին. որ չափ ևս ա-ռաւել հոգին որ անկեալ է 'ի մեղս և յառնէ անդրէն խոտան ոչ երևեսցի առաջի ա՟յ. զի նա կարի առաւելապէս սիրէ զազգս մարդկան քան այլ ոք զհանդերձս իւր. և տես զանչափ սէր ն՟ր որ վ՟ս մեր մարդացաւ և մեռաւ ան-մահն ա՟ծ և ոչ թէ սիրէ միայն այլ և բառնայ 'ի վ՟ր յուսուց իւրոց: Արդ որ ոք ունիցի ականջս լսելոյ լուիցէ. և 'ի մնայցէ և վայելեսցէ 'ի բարութեցն 'ի ձեռն խոստովանութե և ապաշխարու-թե պարգևացն. որ փառօք պսակէ և 'ի գահոյս հանգուցանէ 'ի ք՟ս յ՟ս 'ի տ՟ր մեր որում վայելէ փառք իշխանութի և զօ-րու այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-

տենից. ամէն:

Աղեղբոր պէս թէ խոստովանութիւնն. որպիսի շահ-աւոր հոգւոյն որ ազատէ ի դժոխոցն գեհեննոյն.

Ողջումն առանց խոստովանութե ոչ

 հասանի

հասանելի թողութեն մեղաց. և այս այսու-
օրինակաւ ցուցանի. քանզի կին ոմն խոս-
տովանեալ զմեղս իւր զմի թագոյց, զոր
սակս չար ամօթոյ ոչ համարձակէր յայտ-
նել. վս՟ որոյ 'ի խղճէ մտաց յոյժ չարչա-
րեալ գնաց յեկեղեցի. և անկեալ առաջի
սրբոյ սեղանոյն զա՟մ մարմինն թանայր
արտասուօք. և մեծաւ պաղատանօք աղա-
չէր զա՟ծ. զի զայն մեղք զոր ոչ իշխէր
ումեք յայտնել, առանց խոստովանութե
թողցէ նմա, իբրև զբազում ժամանակս
այսպիսի աղօթէր. քահանայն որ էր յայն
ժամ յեկեղեցւոջ. ետես սատանայ որ 'ի
վ՟ր կնոջ այսր անդր թռչէր. և 'ի խնդու-
թէ ծիծաղէր. ծափս հարկանէր. և վաշ
վաշ կարդայր. վս՟ որոյ քահանայն երդ-
մնեցոյց զսատանայ յանուն տ՟ն ա՟յ յի՟ ք՟ի
ասելով. ով պիղծ. զի է զի այդ չափ ու-
րախանաս. ասա ինձ զպատճառ զինչ
պատահեցաւ քեզ. պատասխանի ետ սա-
տանայ, զի արդ ոչ ծիծաղեցայց. տե-
սեալ զայս կին որ կոծելով և ողբալով
ձգելի 'ի դժոխս կարծելով ան մտ թէ
լալով և արտասուօք զմեղս իւր զոր ոչ խոս-
տովանեցաւ կարիցէ ջնջել. յանկարծելիս
ձգտի ծաղու, և ոչ թողութեն արժանի.

զայս լուեալ քահանայն գնաց առ կինն՝ զոր
ինչ եւ եւս լուաւ ծանոյց նմա. եւ զերկ
չոտն առ 'ի կատարեալ խոստովանութ̃ն
ոչ̃ կարէր յորդորէր: Իսկ կինն 'ի բաց
թողեալ զամօթն իւր, զմեղքն զոր այս
քան ժամանակ թաքուցանէր. մեծաւ
խոնարհութ̃բ եւ արտասուօք խոստովա
նեցաւ, զոր իբրեւ ետես սատանայ մե
ծաւ աղաղակաւ եւ գարշահոտութ̃բ զե
կեղեցին լցեալ անյայտ եղեւ:
Եթէ ոք ան փոյթ առնէ զխոստովանու
թ̃ն ոչ ինչ բարեգործութ̃ն կարէ զնա
'ի տանջանաց ազատել. որ մի ումեք երկ
բայելով երեւեսցի քանզի այր ոմն արդարեւ
բարեպաշտ ունէր կին ամուլ. որք խնդրէին
ա̃յ զաւակ. եւ խոստանային տալ զնա 'ի
ծառայութ̃ն՝ զոր իբրեւ ընկալան ետուն
զնա 'ի վանս. եւ նա յոյժ սրբութ̃բ ծառայ
էր ա̃յ. եւ զի այլ զաւակ ոչ ունէին. վա̃մ
ինչս բաշխէին աղքատաց. Մինչ զի մար
դիկք զնա հայրս աղքատաց կոչէին: Յետ
այսորիկ կինն անկաւ 'ի շնութ̃ն ուրումն
ծառայ 'ի տ̃ն իւրոյ. եւ ծնեալ որդի իւրում
ձեռօք եսպան զնա. եւ ընդ մահճօք թա
ղեաց. ուստի յաւել ողորմութ̃ն եւ 'ի տուրս
կարօտելոց. մեռաւ այրն ն̃ր. եւ նա եւս 'ի

պղծագործութ̃ն մատնեաց զանձն իւր· և զերկրորդ արու զաւակ ծնեալ զնա եւս ոչ զառաջինն ես պան · և ոչ երբէք զայն մեղս խոստովանեցաւ · այլ յուսալով 'ի մե ծութ̃ն որոց աղքատաց · առանց խոստո վանութ̃ն զփրկութ̃ն հոգոյ իւր խոստա նայր · և երբև հիւանդացաւ և ստիպեալ եղև առ 'ի խոստովանութ̃ն և ան փոյթ արար և մեռաւ և 'ի դժոխս թաղեցաւ · որդի նր̃ քահանայ լուեալ վս̃ մահուան մօր իւրոյ մեծաւ պաղատանօք աղաչէր զա̃ծ վս̃ նր̃, պահէր, պատարագ մատու ցանէր · ձգնէր · զմարմինն չարչարէր :

Յաւուր միում մինչ դեռ զպատարագ կա տարէր ջեր մեռանդ սրտիւ ետես զմայր իւր յանդիման · և երկուս ահագին վի շապս, որք զստինս և զամ̃ մարմին նր̃ չար չարէին · և յորժամ որդին եհարց զմայր իւր թէ ո̃վ կաս · պատասխանի ետ դա տապարտեալ եմ սակս ամօթոյ խոստովա նութ̃ն · զի ոչ ինչ բարեգործութ̃ն օգնէ խոստովանութ̃ն . եհարց զնա որդին զինչ նշանակէն այդ վիշապք · և նա ասէ թէ զորդիս զորս պարտէի սնուցանել ձեռօք իմովք սպանի, վս̃ որոյ տուեալ են ինձ 'ի տանջել զիս 'ի յաւիտեան :

Տպեցաւ · թվին հայոց · ռՃծթ · հկ̃բ̃ի · ժ :

